



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

The image shows the front cover of an antique book. The cover is decorated with a traditional marbled paper pattern, often called 'stone' or 'shell' marbling, featuring large, irregular, brownish-green spots with intricate internal patterns, separated by a network of fine, branching veins in shades of red and white. The spine of the book, visible on the left, is bound in a dark brown, textured material, likely leather or cloth. A small, rectangular white paper label is affixed to the lower-left corner of the front cover. The label has a thin, decorative border and contains handwritten text in blue ink. The text consists of the letters 'LGN' on the top line, a horizontal line below it, and the number '1082' on the bottom line.

LGN


1082

1999



ՅԱՐԵՂՈՒԹՅՈՒՆ

Ի Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Ն



ՓԱՐԵՉ. — ՏՊԱԳՐՈՒՓԻԷՆ ԱՐԱՄԵՆԷՆ.

Paris. — Typographie arménienne de Walder, rue Bonaparte, 44.

ՅԱՒԵԼՈՒԱՄ


ԻՊԱՏԵՐՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԻՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՍ

ԻՇՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ,

ՎԵՐԱՊԱՐՈՒ ԵՆ ՀՈՐԵՐՈՂԻՑ

Տ. ԻՈՐԵՆԱՅ Ի. ԳԱԼՏԱՅԵԱՆ

ՔԵՐԹՈՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ.



ՓԱՐԻԶ

ՏՊԹԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ.

1858—ՌՅԸ



88/5N

THE UNIVERSITY OF CHICAGO

DEPARTMENT OF THE HISTORY OF ARTS

OFFICE OF THE DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS

RECEIVED

APR 10 1972



91072

UNIVERSITY OF CHICAGO

28. 1072 91072-60

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ


ԻՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԻՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՍ

ԻՇՈՅ ՀԱՅՍՏԱՆԵԱՅՅ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻՈՅ,

ՎԵՐԱՊԱՐՃ ԵՆ ԿՈՐՐՈՂԻՆ

ՏԵԱՌՆ ԽՈՐԵՆԱՅ ԳԱԼՖԱՅԵԱՆ ԽՈՐԻՈՒՈՒՆՆԻՈՅ

ՔԵՐԹՈՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ.



Եր Վերադարձին պատմութիւնն ու պատճառները կարդացողներուն շատը խիստ լաւ հասկըցան զայն. շատերը հաւանեցան, շատերը գովեցին, եւ խիստ շատերը փառք եւ գոհութիւն տուին աստուածային ողորմութեանն, ինչպէս որ յայտնի է յոգնախառն նամակներէն եւ ազգային լրագիրներէն : Արդէն *Մասեաց Աղաւնիէն* իմացան ազգայինը՝ մեր Տփխիսեցի հեռաւոր բայց սրտամերձ եղբարց վրայ այն գրուածքին ըրած մեծ ազդեցութիւնը, մինչեւ առանձին Երկար Յառաջաբանութեամբ կրկին եւս տպագրել զայն, իյազուրդ ծարաւոյ բարեւեր ժողովրդեանն :

Ահա մեր էս տպած *երկու հագար* օրինակը բոլոր
ցրուեցաւ, որով էս ստիպուեցանք *Մասեաց Աղաւնոյն*
էջերուն մէջ կրկին տպագրելով զայն՝ հասարակաց
փափաքը լեցրնել :

Զարմանք չէ որ գտնուեցան նաեւ ոմանք որ չհաւ-
նիլ ցուցուցին. վասնզի ո՞վ չգիտէր թէ չէին կրնար
հաւանութիւն տալ մեր ըրածին Նախ անոնք՝ յորոց
մէք կամաւորապէս բաժնուեցանք . Երկրորդ՝ կեղ-
ծաւորները, որ թեպէտ արտաբնուստ բաժնուած կե-
րենան առաջիններէն, բայց սրտով էս հոգւով անոնց
հետ միաբան են . էս Երրորդ՝ այն իմաստակները՝ որ
անտարբերական հոգւոյն ծայրը հասած ըլլալով՝
հաւասարապէս ստեցողք են սրտիւ ամենայն կրօնա-
կան սկզբանց էս էկեղեցական անճանց, ուստի էս մեր
Վերագարձին վրայ նոյն արհամարհոտ աչքով կը-
նային՝ որով կնայէին մեր հոռովմեականութեանը էս
մեր հայութեանը վրայ :

Բախտ ունիմք որ առաջինները սակաւ են, երկ-
րորդները՝ սակաւագոյն, իսկ երրորդները՝ անոնցմէ
այ սակաւաւոր :

Բայց մեր գրուածքը այս երէք դաս մարդկանց գրեթէ
մեկուն համար այ չէր, այլ միայն այն պատկանելի
բազմութեան համար՝ որ հանգուցեալ սրբազան Հայ-

րապետին մերոյ՝ Ներսէս Կարողիկոսին, և անոր արժանաժառանգ յաջորդ աստուածապատիւ Մատրեոս Կարողիկոսին հետ, և Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի ամենապատիւ Պատրիարքաց, Տաճկաստանի և Ռուսաստանի՝ Հայաստանի Պարսկաստանի և Հնդկաստանի սրբազան Արքեպիսկոպոսացն և Առաջնորդաց, գերապատիւ Վարդապետաց, պատուական Քահանայից, բարեպաշտ Իշխանաց, ազգախնամ Ամիրայից, և յուսանորեայ Ազգասիրաց հետ լաւ ճանչնալով այսպիսի ազգային գործոյ մը յարգն ու մեծ հետեւանքը, իրենց սրտեռանդն ուրախութիւնն ու ցնծութիւնը շատ կերպով յայտնեցին, և անդադար կյայտնեն գրով և բանիւք, և որոց և մեր իսկ լիուլի սրտիւ յայտներ եմք և կյայտներմք հրապարակաւ մեր երախտագիտութիւնը :

Նոյն անճախանճ և բարեսէր համագլխ եղբարց մերոց համար կգրեմք անա նաեւ առաջիկայ փոքրիկ ՅԱԻԵԼՈՒԱԾը շարժեալ իյոքնաբախանճ խնդրոյ բազմաբիւ նամակաց նոցա՝ զոր անդադար յայլեւայլ Հայ հասարակութիւններէ կընդունիմք . ուստի և իրենց բաղձանաց համառօտիւ կատարումը այս անգամ տալով՝ յուսամք որ նոյնպէս կուրախացընենք գիրենք :

Ըսեր էինք մէք մէր պատմութեանը մեջ . « Փափա-
« գելի է մեզ և ուխտիւք խնդրելի՛ որ մեր օրինա-

« կին հետեւողները բազմանան, եւ մեզմէ բիրա-
« պատիկ աւելի օգտակար ծառայութիւններ ընեն
« ազգիս եւ եկեղեցւոյ : » Չէինք կրնար այն ժամա-
նակէն ալ ջտեսնել մեր այս իրաւացի փափագանաց
շուտով կատարուելուն դէմ եղած մեծամեծ դժուար-
ութիւնները՝ որ այս երկու տարուանս մեջ էսս
առաւել յայտնի եղեն . այսինքն են՝ դժուարութիւնք
իկողմանէ մոլար խղճի կամ խղճահարութեան ոմանց,
դժուարութիւնք իկողմանէ մարդկային անարգ նկատ-
ման կամ անտեղի ամօթոյ բազմաց, դժուարութիւնք
իկողմանէ նրբական կամ բարոյական ջբաւորու-
թեան, դժուարութիւնք իկողմանէ ազգակիցներու կամ
բարեկամաց կապակցութեան, դժուարութիւնք իկող-
մանէ անստոյգ կամ կեղակարծ յաջողութեան, եւ այլն :

Ոմանց խղճահարութեան դժուարութիւնները պետք
չէ բոլորովին արհամարհեն այն մարդիկն որ գիտեն
քէ ինչ ըսել է կրօնաւորական կապկպած կրթութիւն,
եկեղեցական խոստումն, հոգեւորական ուխտ, եւ
բազմամեայ վարժութիւն այս կամ այն վիճակի եւ սո-
վորութեանց : Կան շատ ուղիղ եւ յուսաւոր խիղճ ու-
նենալու ե մեկը որ այս դժուարութեանց շուտով յաղքէ,
եւ կամ սննդան էւ այնպիսի նեղութիւն ու անիրաւ
հալածանքներ կրէ իրեն պաշտպան ու օգնական ըլլա-
լու մարդիկներէն՝ որ գրեթէ բռնութեամբ բացուին
իր մոլար խղճմտանքին աջուրները, եւ հասկը-

նայ թէ ինչ աստիճանի ծուռ ճանապարհ է բռնածը :

Եւ միթէ կրօնական խղճահարութեան վնաս կմնայ մարդկային նկատմունքը կամ ամօրը : Ո՞վ չգիտեր որ մարդիկ շատ անգամ, — ափսոս իրենց, — աւելի վեր կղեն ուրիշներուն մեղադրանքը՝ քան թէ Աստուծոյ անեղ դատաւորին պատուիրանքը . ուստի եւ իրենց բռնած ծուռ ճամբէն ետ դառնալու անտեղի ամօրը աւելի կկապէ ոտքերնին՝ քան թէ իրենց ուղիղ խղճմտանքին զրդմունքը :

Ո՞վ է այն մարդը որ բանի տեղ չդնէ նիւթական եւ բարոյական ջբաւորութեան մեծ դժուարութիւնը . ո՞վ է այն մարդն որ համարձակի ըսել՝ իկաբոյիկութենէ իհայութիւն գալ ուզող անձի մը թէ « Մի վախնար, « անցիր մեր կողմը, մեկենիմեկ ամեն հանգստութեանդ կգտնես . թեզի համար ոչ ապրուստ կպակսի՝ « ոչ հարստութիւն, ոչ փառք՝ ոչ պատիւ եւ ոչ « իշխանութիւն, ոչ օգնականութիւն եւ ոչ հօր « պաշտպանութիւն . Ազգը գրեզ իրեն գիրկը կըն- « դունի, իւր գլխուն վրայ տեղ կուտայ թեզ, իւր բոլոր « գանձերը կբանայ քու առջեւ... » Այդ ըսող բարեմիտը, մանաւանդ թէ միամիտը, կմոռնայ անշուշտ իր եւ իցե ազգի մեջ, եւ մանաւանդ մեր ազգին մեջ գտնուած անպակաս եւ անդադարելի երկպառակութիւնները, անհիմն հակառակութիւնները, անխորշելի նախանձը, անխոհեմ նախանձայուգութիւնները, ան-

դուռն բերանով եղած զրպարտութիւնները, առանց քննութեան այնպիսի զրպարտութեանց հաստատու պատրաստ եղողներուն շատուորութիւնը, և որ այն ևս : Ապա թէ ոչ՝ անկարելի է որ համարձակի իկարողիկութենէ ինայութիւն գալ ուզող մարդուն, մանաւանդ եկեղեցականին, այդպիսի նիւթական հարցատութիւններ, հանգստութիւններ, փառքեր ու պատիւներ խոստանալ :

Դեմք թէ խոստացաւ բարեմտին մեկը, ո՞ր գտնեմք այն միամիտն որ հաստատայ այն խոստմունքներուն, կամ թէ ինչ ապացոյցներով հաստատայ :

Արդեօք էրից Վարդապետացոյ դիգած հարստութիւններովը... մեր վայելած հանգստութիւններովը... մեր ձեռք բերած պատիւներովն ու փառքերովը... :

Միթէ ինքը միայն պիտի ջտեսնէ, ջլտէ, ջիմանայ մեր ունեցած դիւրութիւններէն շատ աւելի՝ նիւթական ջքաւորութիւնը, մեր վայելած հանգստութենէն աւելի՝ տաժանական աշխատութիւնները, մեր ընդունած պատիւներէն աւելի՝ յանձն առած ծանր ծանր պատասխանատուութիւնները..... :

Զեմ ըսեր թէ ջհ կարդացեր այնպիսին մեր Վերադարձին պատմութիւնը, և անոր 48 և 49 էրեսներուն մեջ ըսուածները. բայց կտարակուսիմք որ դիւրաբաշալերուի անոնցմով մեզ հետեւելու :

Վերջապէս ասոնք այնպիսի դժուարութիւններ են

որոց յաղբէլը ամեն մարդու բան չէ, և ամեն մարդէ
այնչափ արիւնքիւն, այնչափ ազգասիրութիւն, այն-
չափ անընչասիրութիւն, այնչափ անփառասիրու-
թիւն, այնչափ ճշմարտասիրութիւն, այնչափ լու-
սաւոր միտք պահանջելու իրաւունքը մէկու մըն ալ
տրուած չէ : « Որ կարողն է տանել ' տարցի »
(*Մատթ. ԺԹ, 12*) կըսեմք 'Քրիստոսի հետ և մեք' որ
ըստ մեր տկարութեանը կերպարանակից նորա խըն-
դրեմք լինել իվիշտս և ինեղութիւնս :

Այսու ամենայնիւ հանդերձ, ահա աւետիս կու-
տամք ուրախութեամբ մեր բարեսէր համազգի եղբարց
որ գտնուեցաւ նաեւ մէկ անվեհեր քաջ 'Նահատակ մը'
այս ամենայնէ աստուց նման մեծամեծ զփութարութեանց
յաղբող, և մեր մտաց ուղիղ ճամբուն եռանդուն սի-
րով հետեւող. որ է մեր մեջէն երիտասարդագոյն վար-
դապետին հարագատ եղբայրը ' Գերապատիւ Քերրոդ

ԽՈՐԷՆ ՎԱՐԳԱՊԵՏՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ :

Երից վարդապետացս վերադարձը' մեր աննախանձ
և բարեպաշտ և ազգասէր եղբայրներէն ոմանք
նմանեցուցեր էին Երփնագարդ ծիածանի' որ ամա-
րային սաստիկ ու փոքորկալից անձրէններէն ետեւ
դէպ Երկնքին մէկ կողմը բշուած ամպերուն արտօս-
րանման կարիւններուն վրայ կամարածեւ կփայլի ,

իմխիբարութիւն վշտացեալ եւ սրտաբեկ որդւոց
Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ :

Թող գնձան ուրեմն այնպիսի բարեսերները . ահա
այն ծիածանին գլխաւոր մեկ գոյնն ալ Այրարատայ
գլխուն վրայ փայլփայլուն շողալով երեսն էլաւ :

Բաժնուեցաւ Խորեն վարդապետը Վենետկոյ Մխի-
բարեան միաբանութենէն , եւ միաբանեցաւ մեզի հետ,
ըսէլ է թէ վերադարձաւ ինարագատն իւր հայրենի
սուրբ Եկեղեցի՝ հաստատուն դիտաւորութեամբ մեզի
հետ աշխատելու իպայծառութիւն եւ իյառաջադի-
մութիւն Ազգիս , յանձն առնելով արիաբար մեզի պես
ամենայն դժուարութիւն եւ տառապանք եւ հալածանք
եւ ջարխօսութիւն եւ գրպարտութիւն իբշնամեաց
եւ իսուտ բարեկամաց անտի :

Այս նոր Վերադարձին պատմութիւնն ալ ըստ բա-
նականին հետաքրքրական եւ գիտնալու արժանի բան
է . « *Ուրուագիծ ոգւոյ եւ ընթացից Մխիբարեան Մխա-
բանութեան Վենետկոյ* » ըսուած մեր գրքուկին շատ
խօսքերուն գործնական ապացոյց մըն ալ այս է : Սա-
կայն գանազան խոհական խորհրդածութիւնք եւ հե-
ռատես ու շրջահայեաց նկատմունք , եւ մանաւանդ
մասնաւոր անձանց խօսքերն ու գործերը առանց
ստիպողական հարկի մը չնշաւակելու հաստատ դի-
տաւորութիւննիս , հարկ առնեն մեզ՝ որ ուրիշ ժա-

մանակի ճգեմք այս Վերադարձին մանրամասն պատմութիւնը՝ էրէ պետք լինի . իսկ առ այժմ գոն լիցուք ամենահամառօտ տեղեկութիւն մը տալով Եղածին վրայ, և այնչափը միայն իզիբ անցընելով՝ որչափ որ բաւական է ինքերբումն անտեղի խօսից և մեղադրութեան տգիտաց, նախանձոտաց և հակառակասէր անճանց :

Խորէն վարդապետին ղիւցագնական գործոյն իսկական յարգն ու արդիւնքը նորա միայն կարող են գոնէ փոքր իշատէ ուղղութեամբ հասկընալ՝ որոնք Վենետիկոյ Մխիբարեան միաբանութեան այժմուներքին և արտաքին վիճակներուն ընդհանրապէս տեղեակ են, և նոյն Վարդապետին բարոյական ու մտաւորական սակաւագիւտ կառարելութեանցը վայելող և տեղեակ :

Այսպիսիք պիտի համարուին բնականապէս ամենէն աւելի իւր կրօնակից Մխիբարեանները . վասնզի դեռ ևս նորա միայն լաւ գիտեն թէ այն Անճին վրայ ոչ սնոտի փառասիրութիւն, ոչ անարգ անճնասիրութիւն, ոչ վատ շահասիրութիւն, և ոչ մոլեկան ազատասիրութիւն տեսնուէր է երբէք իմանկութենէն հետե, այսինքն քանի որ Ս. Ղազարու վանքին մէջ բնակէր էր :

Անդստին իտղայ տիոց վանական կենաց մէջ սնեալ և դաստիարակեալ անճն է Խորէն վարդա-

պետը : Ուրուագիծը կարդացողները հասկըցած էն անշուշտ թէ վանքին մեջ տրուած դաստիարակութիւնը՝ մեծամեծ պակասութիւններ ունի, եւ աւելի ալ կունենայ երբոր անոր առաջնորդները կուրօթեն հետեւին ճիզվիրական սահմանադրութեան վնասակար կտորներուն, եւ այնպէս առաջնորդեն իրենց խնամոցը յանձնուելու դժբաղդութիւն ունեցող խեղճ աշակերտաց :

Արդ Խորեն պատանեկին առաջնորդները այնպիսի անձինք էին որ ամենայն անմեղ ազատամտութեն հետո, եւ ամենայն ազգասիրական սկզբանց ատեցող ճանչցուած էին ամենէն : Այնպիսի առաջնորդութեան տակ՝ ճրքան դժուարին բան պիտի ըլլար անարատ պահել իւր սրտին փափկութիւնն ու ազնուութիւնը, եւ անշիջանելի կրակով բորբոքել միշտ իւր ազգասիրութեան վառարանը :

Եւ սակայն ոչ թէ իւր կրօնակիցները միայն, հապա նաեւ օտարները, մանաւանդ իւր գրուածքները կարդացող ուսումնասէր անձինք զիտեն եւ կվկայեն որ Խորեն վարդապետին ոչ սիրտը ապականեր է երբէք կեղակարծ բարոյականի մը վնասակար սկզբունքներով, եւ ոչ միտքը մըրնցէր է նորամուտ ազգատեցական խաւարային վատութիւններով :

Հակառակութեան խոխուներ եւ նախանձու խծուծ-

ներ անդադար ձգուէր են անոր բոցավառ, ազգասիրութեան կրակին վրայ՝ որ մարեն անցընեն . բայց այն կրակին հետ առաւել բորբոքելուն պատճառ, եղեր են :

Բայց Խորեն վարդապետին բնաւորութեանն ու առաքինութեանցը մեծ բուրայ՝ մեծ փորձարան եղաւ տարիներով Մուրատեան Վարժարանին վերջին դասն անցբերը : Հոն էր իւր հարագատ Եղբայրը ըստ նոգւոյ էւ ըստ մարմնոյ, էւ ինքը ջեր կրնար անոր հետ քրթակցութիւն ընել, որ գոնէ հարցընէ իմանայ թէ արդեօք ստոյգ են անոր վրայ էւ միւս երկու վարդապետացս վրայ իւր ականջին հասած անհաւատալի խօսքերը : Ամեն բուրք մեծաւորին ձեռքէն պիտի անցնէր . վասնզի Վենետկոյ քղբատան էւ ուրիշ պաշտօնական տեղերուն կաշառօք էւ սեղանօք խընդիրք ըրած էր մեծաւորն որ չըլլայ թէ դրսէն, — մանաւանդ Փարիզէն, — Եկած բուրք մը կամ գիրք մը ուղղակի միաբաններէն մեկուն ձեռք տրուի :

Մեծաւորը էւ իւր խորհրդակիցները մեկ կողմանէ այսպէս ամենայն զգուշութիւն ընելէն ետեւ, մեկայ կողմանէ շինծու ցաւ կցուցանէին Մուրատեան վարժարանը կառավարող անձանց իրենց աջքին ապօրինաւոր երէնցած ընթացքին վրայ, սրտերնուն ուզածին պէս կձեռացընէին կպատմէին վանականաց, ուստի էւ Խորեն վարդապետին, Փարիզու վարժարանին ազ-

գային խնդիրները. միւս կողմանէ ալ խորագետ ճարտարութեամբ սեր չկար որ ճշուցնեին, պատիւ չկար որ ջընեին իրեն, որպէսզի երէ յանկարծ մտքէն ալ անցնի կերպով մը եղբօրը կարեկից լինել, — Եւ աղէկ գիտեին որ այնպիսի դիւրագգաց փափուկ սիրտ մը չէր կրնար իւր հարագատին վշտացը անկարեկից լինել —, գեր վախնայ ապերախտ գտնուելէն այնպիսի առատագութ մեծանորի սիրոյն ու մեծարանացը դէմ. Եւ ոչ այսչափ միայն, այլ Եւ ինքը իւր հանճարովն ու գործքովը հարագատին դէմ զինուի Եւ օգնէ սնն մեծանորին որ անոր եղբայրն ու սիրելիքը կհալածէր սուսերօք Եւ բրօք. Եւ որ կփափաքէր Եւ գնա Եւս առնել իւր գործակից Եւ արբանեակ, ուրիշ շատ վատերուն ու մատնիջներուն պէս.....

Ձեր գիտեր բէ այն անմեղ ոգին չէր կրնար այնպիսի շնջմամբք բունանորիլ, չէր գիտեր բէ կար մեկ անտես Աջք մը որ իրմէն աւելի կճանչնար զայն, ուստի Եւ կխնամէր իվերուստ՝ իրեն լուսանոր ապագայ մը պատրաստելով. չէր գիտեր... բայց ինչպէս գիտնար, ինչպէս ճանչնար նա ուրիշի ոգին, էբբ անսղ իւր « Որոյ ոգւոյ ըլլալը ոչ գիտեր » (Դ/Թ. 55):

Գիտէր անդիէն Ամբրոսիոս վարդապետն ալ բէ իւր հարագատը վանքին մէջ իրան հանգիստ է ըստ Երեսուրին, Եւ ինչպէս որ արժանին էր՝ ազնուական

բարբո՛ւք սիրելի ամենուն եւ զանազան ուսումնական պաշտօններով փառաւորեալ, բայց իւր եղբայրական սրտին անտանելի ցաւ մըն էր ջկարենայ գիտնայլք քեարդէօք Հարազատը՝ իւր քաշած տառապանաց ծանրութիւնն եւ հանգամանքները գիտէր, ինչ գաղափար էր ստացեր ինչպէ՛ս ճշտօն ջարանախատ ամբաստանութիւններէն, եւ ինչ դատաստան ու կարծիք ըրեր էր արդէօք յսածներուն վրան :

Սիրելոյ մը սրտին անկից անելի վշտայի բան ջկընար լինել՝ որ գիտնայ քե բիւր ջարախօսութիւններ ու գրպարտութիւններ իւր վրան կըլլօին իւր մտերմին սուջէն, եւ անմեղութիւնը ջկընար իւր անուշ ճայնը հասցընել իղիւրայուր յսելիս սիրեցելոյն :

Այսպիսի վշտայից զգացման մը մէջ էր Ամբրոսիոս վարդապետը, երբ Նախախնամութիւնը բարեկամի մը մեռնով յաշողեցոյց որ կարենայ սրտին տապնապն ու կարօտը իր սիրելի Հարազատին հաղորդելու :

Ի՛նչ մեծեղան իւր ուրախութիւնն ու քանի՛ զոհութիւն տուան ողորմութանցն Աստուծոյ, երբ երկու տարուան խոր ու մահահանգոյն յուրեմէն էտեն՝ վերջապէս իբր իմեռելոց իւր հարազատին քաղցր ճայնը կլսէր, կիմանար ու կապահովէր իրմէ՛ք՝ քե նոյն սիրտն է ու նոյն զգացմունք, նոյն կարօտ եւ նոյն սէրն հայ-

րենեաց եւ սիրելեաց՝ որ կարծարծեր ինմա անշի-
ջանելի : Այն սիրտը կըսեմք՝ որ իրեն ներքին ցաւե-
րուն հեծութիւնները իւր մէջը կհնդճուցաներ, ու
գարտասուս կկոչեր որ զան բափին ու իւր կրակը
պաղշտկցընեն .

Յօդեցէք աչքս արտասուք .

Յօդէք յոգւոյս իմ պասուր.....

Ու շատ անգամ ալ իւր ջորս կողմը նայելով, ու ջորս
կողմը լննն անապատ մը տեսնելով, անապատ՝ գոր
սիրելեաց հեռանալը կհեւացընէր, կգոչէր սրտառուջ
նայնով . ԱՄԱՅՈՒԹԻՒՆ . ու իր ոգելար քնարը կառ-
նուր ու այն *Թախծութիւն, Ո՛վ Յաւք, ով Յաւք,
Անայտութիւն, Ինս ուրախ եղիցիս սիրսք մեր, Յիշա-
սակք սիրելեաց*, եւ այլն, արցունքով ողբերգած տա-
ղերը կերգեր, զոր եւրնքերցողքս կլիշէմք արտասուօք :

Եւ այլ էրբեմն տեսնելով որ իւր այնչափ վշտացը
մէջ չկայ մեկը որ իւր ցաւն զգայ, չկայ մեկը որ իրեն
կարեկցութեան խօսք մը ըսէ, այլ ընդհակառակն՝
նաեւ իբրեւ իրեն նախատինք կհամարէին որ այն-
պիսի սիրելիներ ու այնպիսի եղբայր մը ունէր՝ որ
Հայրենեաց ու սուրբ Եկեղեցւոյ սիրոյն էին զոներ
իրենց փառքն հանգստութիւնը եւ ապագայն, այն
ատեն յուսաբեկ սիրտը եւ ոչ իւր արցունքներովը
բույցած քնարին լարերէն մխիթարութիւն մը գտնե-
լով՝ արտասուալից աչուրները վեր կվերցընէր առ

Նա որ միայն է վշտաց եւ անձկութեանց ապաւեն ,
առ. Նա յորայ վերայ դրեր էին իւր սիրելիքն ու հա-
րազատը իւրեանց յոյսն ու ակնկալութիւնը , ու կհեծեր
հառաջանօր .

Արդ զի մահացուք փակեան՝ ունին զաջս ,
Զաջս՝ յորմէ աղետք հայցեն ըզգորով ,
Եւ յայն յոկ բացեալ որ արհամարհ շահ ,
Կամ որ ոչ աղեացն ածիցէ վըրդով .

Արդ զի ատելի ցաւօցն արտասուք ,
Յորոց մըղձկելոյն բերեանայ սիրտ՝
Որջափ յայլ իսիրտ քամէ կամ իձեռս
Խառն յաղի վիժանսն յատակին ըզդիրտ .

Արդ զի կորուսեալ վիշտք ըզպատկառանս՝
Զոր ազդեն բաղդին իբրու պատարագ ,
Եւ որպէս ըզբու ձախողակ հըմայց՝
Վըշտացեալքն իծաղը առնուն եւ յառակ .

Արդ զի հարկ է պինդ ունել ըզհառաջ
Իսըրտի՝ հանգոյն իշիջեալ հրարուխ ,
Հարկ՝ որջափ հրատապ ցաւքն իցեն եւ վեր ,
Արտասուացն որջափ անհատաբար ուխ .

Արդ զի եւ երկնից կորեաւ յոյս կասոյստ ,
Որ սիրան ըսփոփեր զքր յապառնեաց տես ,
Եւ տըխուր աչկունք յայս ամպոց գուպար
Ակընկորին գոգ կորուսեալ եւ գրեզ ,
Տեր , դու երբ տեսցես :

Տէր, յորոյ հրաման զայ այս մառախուղ,
Պատկեր ում ըզսիրտ կայեալ է բախիծ,
Եւ բուք վեր իվայր հարեալ զանդ եւ ջուր՝
Թողու զսա պըղտոր, մահուամբ զայն ելից .

Որ զիտես քանի քոյդ յակնարկու բիւն
Ծածկիցէ այս ձիւն տանիս, արտավար,
Քանի պաղիցին առուակք քաղցրահոս
Թըռչնեկին խուզ եւ մարգաց դայար .

Որ մինչ հիւսիսոյ ասես թէ « Շընչեա , »
Կընքեալ է յոր դեմ, յոր մայրիս, յոր բուփ,
Քանի վարդենեաց բափեսցէ բաժակ՝
Կամ՝ ցընդէ փետուրս եւ ծաղկունս իծուփ .

Փետուրս՝ գոր հաւիկն յիւր երող իջուն,
Ուիմերս արդ զփայլ՝ նա երգէ իջեր,
Ծաղկունս՝ որք խամբեալ, բայց յիւրեանց խտերմ
Փըրբեսցին դարձեալ բոյր եւ բոյր յայեր :

Այլ իբօթափել եւ մեր սիրելեաց,
Որոց մեք սըրտին՝ մերոյս նոքա զարդ,
Յորոց առնուաք ըզջուր կամ զըստուեր,
Եւ իմենչ իբաց անկան տարապարտ....

Երբ կապուտ յոգւոցըս խինդ եւ ըսփոփ,
Թեւք՝ յորոց բերեւ սլացեալ տանեին,
Հայիմք շուրջ սիրոյն յայնքան տերակս,
Եւ չիք որ խոստայ դարձ, կեանք վերըստին...

Տէր, զայս մեր եւեթ տեսանիցեն աչք,
Չի ցանգ արտասուս արկցեն աղեկեզ .

Իսկ ոյր այց գրբոյդ ե առհաստեցեայ՝
Տէր, դու երբ տեսցես :

Մինչ իխարարեալն արտ ղիտե մըշակ՝
Ըզգենու ըզոյս ամուլն անդ երեզ,
Հանգոյն եւ իմեր քե նայիս աղետ՝
Յակօսից վըշտաց խինդք բուսցին եւ մեզ...
Ո՛հ, երբ, երբ տեսցես :



28/03/25

Բայց քե որ մահացուք աշուրնիկն զոցեր էին, ինչպէս
սրտառուջ ճայնով մը կբողոքեր քերթողը, սակայն
ոջ նոյնպէս եւ Անմահը, ինչպէս նաեւ անոնց ականջ-
նին քոցած ժամանակ՝ « Բաց էր իւր ականջը » ան-
մեղին հեծութիւնները լսելու, ու անոր Տէր, երբ տես-
ցես (Սղմ.) գոչէիէն շատ ալ առաջ տեսած էր ու ողոր-
մած քե իւր սիրելեաց եւ քե իրեն վրայ. եւ որ
ինչպէս զանոնք անհուն գրութեամբը « Իւր ձեռքին
հովանիին տակն » էր առեր, այսպէս եւ զինքն
իսկ պիտի այն « Անապատ երկրին պանդխտու-
քենէն » հաներ ու Աւետեաց երկիրը իւր հայրենի
ժառանգութեան մեջ պիտի փոխադրէր :

Թէ որ մարդս միշտ ամեն օր ամեն ժամ, մա-
նասանդ քե եւ ամեն վայրկեան Աստուծոյ օգնութեանը
դիմելու պետք ունի, քե որ « Առանց նորա ոջ ինչ
կարենք առնել, » (Յովն. ԺԵ. 5) եւս առաւել դժուարին
ու ծանր պարագաներու մեջ՝ յորս մեր սիրտն ու ոգի

այլկոծեալ կծփին ի վարանս եւ յերկիւղ, եւս առաւել՝
երբ այնպիսի մէկ ժամ մըն էմք հասեր՝ ուսկից պիտի
կախուի մեր ապագայն, մեր պատասխանատուու-
րեան ժամը առաջի Աստուծոյ եւ արդարապատ մարդ-
կան :

Եւ անա այն ժամուն մէջ կգտնուեր Խորէն վար-
դապետը. « Անկայ (կգրէ իւր նամակին մէջ) անկայ
առաջի սեղանոյն Աստուծոյ, եւ գոչէի արտասուօք.
Յոյց ինն գճանապարհ քո յո եւ զնացից, զի առ քեզ,
Տէր, համբարձի զանճն իմ (Սղմ.)...: Խոստովան լինէի
զի ոչ առ անճին ինչ դիւրի՝ այլ փառաց նորա վասն
նուիրէի զանճն իմ, վասն Հայրենեաց մերոց օգտի
եւ սուրբ Եկեղեցւոյ, եւ վասն որոց տուեալ էր ինն
եղբարս եւ հարս սիրելիս ըստ մտքմոյ եւ ըստ հո-
գւոյ... : »

Այսպիսի ջերմ ու խոնարհանուեր աղօթք մը չէր
կրնար ըլսել գրութիւնն Աստուծոյ, ծագեց իւր երկ-
նաւոր յոյսը Տէաուն Խորէնայ սիրտը, հանդարտեցոյց
անոր ծփալից տագնապը, խրախոյս տուաւ եւ ըսաւ.
« Ես փրկեցից գրեզ : »

Այն երկնային ձայնը փարատեց իւր մտքին տա-
րակոյսներն, ու ցուցուց թէ ինչպէս ինքն ազատ էր
այնպիսի ուխտի մը կապերէն՝ զոր հնգետասանա-
մեայ հասակին մէջ էր յանճն առեր, այն հասակին
մէջ՝ յորում դեռ մանուկը եւ ոչ իսկ ինքզինքը կճանչ-

նայ՝ քննի քե գաղխարնս, քննի քե իւր բոլոր կենացը մեջ ընտրելի ու ապրելի վիճակը, Էս առաւել՝ երբ իւր բարձր բանավարութիւնը վանքի չորս պատերուն մեջն է սկսած բացուիլ, որուն անձուկ հորիզոնը կանձկացրէ նոյն իսկ չափահասից տեսութիւնը, նւր մնաց անփորձ մանկահասակ պատանւոյն....

Ո՞ր բողոքն որ այն սահմանադրութիւնը ազատ կնճեր գՄԽիքաբեանս որ ուզած ժամանակնին կարող ըլլան բողոքել ելլել միաբանութենէն :

Տուցուց իրեն քե Էս առաւել նաեւ անոր համար է ազատ այն ուխտերէն՝ որովհետեւ այն ուխտերը պարունակող սահմանադրութեան մեջ վերջէրս զգալի փոփոխութիւններ մտեր էին. ուստի եւ ինքը՝ ինչպէս եւ ամենայն որ՝ ազատ էր ըստ օրինաց եւ իրաւանց չհպատակելու այնպիսի փոփոխական սահմանադրութեան մը՝ որ հողմացուցի մը պէս մեծաւորին փչած կողմը կղաւնար.....

Հասկըցուց իրեն որ ճշմարտութիւն մը ճանչնալը միայն բաւական չէ. պետք է գայն նաեւ քաջութեամբ գործովք ցուցանել : Պետք էր որ ինքը ըստ Առաքելոյն բանի՝ « Հաստատուն կենար իւր կոչմանը վրայ » (Ս. Կոր. Է. 20) եւ իւր կոչումն էր Հայաստանեայց սուրբ Նիկէեցւոյն « Լինել մշակ *սոսնց արօրոյ* » (Ք. Տ/մ. Բ. 15) : Պետք էր որ ոչ միայն իւր բարութն ու վարութք ցուցնէր քե մշակ է արդարեւ առանց

ամօթոյ, ինչպէս մինչէ. ցայնժամ ցուցուցեր էր գայն,
— գոր է. վերջի օրը վանքին ծերունի է. պատուանոր
վարդապետներէն մեկը՝ Վ. Հ. Արսէն Կ. Բագրատունի,
իճշմարտապիրութենէ ստիպեալ վկայեր էր մեծա-
ցաւօք թէ ինչպէս Խորէն վարդապետը իւր անսոգիւտ
վարութիւնը բարի օրինակ էր եղեր վանքին մեջ ամենուն,
— հապա պետք էր կըսեմք որ առանց ամօթոյ նաեւ
յայտնաբարբառ. ցուցաներ թէ ինքը իրեն պարտք
կհամարի ծառայել այն Եկեղեցւոյն՝ յոր կոչեր էր
գնա աջն Աստուծոյ, է. պարծանք՝ անոր համար
յսած նախատինքն ու քաշած վշտերը :

Միով բանիւ, պետք էր որ ինքը չէ թէ այն վատե-
րուն շատին օրինակին հետեւեր՝ որոց համար կըսէր
Առաքեալը (*Բ. Պէտ. Բ. 21*) թէ « Այլ յաւ էր որ ճշմարտու-
թեան ճամբան բնաւ ճանչցած ջրլային՝ քան թէ ճանչ-
ցան ու (գրուածքն՝ ալ վկայելէն էտքը) էտ կէցան »
ու խղճերնուն իսկ հակառակ գրուածք ու ձեռնագիր
տուին : Նմանեցան սորա այն սերման որ ապառաժին
վրայ սերմանեցաւ, որ ներսի դին արմատ չունենա-
լուն համար՝ քիչ մը տտեն կտէւէ. ուստի է. նեղութեան
է. հալածանաց ճայնը լսելուն պէս՝ մեկէն կգայրակղի
ու կտկարանայ, ըսաւ Տէրն մեր . (*Մտք. ԺԳ. 21*) :

Ոչ էրէ այսպիսեաց՝ այլ աննց պետք էր նմանիլ —
է. անոնք էին իւր հարագատն ու սիրելիքը — որ Մով-
սեսի հետ « Լնա համարեցան ջարջարել ընդ հայրենի

ժողովրդեանն՝ քան առ ժամանակ մի վայելել իմեղս . կարենոր համարեցան զնախատինսն Քրիստոսի քան զմեծութիւն զանձուց, զի հայեցեալ ակն ունեին վարձուցն հատուցման » (Եբր. ԺԱ. 25) :

Այս մտածութիւններով զօրացեալ մեր ծաղկահասակ Վարդապետը, եւ այն արիութեամբ վառեալ՝ զոր միայն առաքինութիւնն ու ճշմարտութիւն կրնան ազդել իմեզ, զնաց որ յայտնէ մեծաւորին իւր ըրած որոշմունքը . եւ զնաց այն ատեն՝ երբ իւր ուսումնական ու տպագրութեանց վերաբերեալ պաշտամանց ամեն բանը կարգի դրաւ ու շտկեց, զիտնալով որ իւր երթալէն վերջը մինչեւ որ ուրիշ մէկը իւր տեղն անցնելու ըլլար՝ բոլոր այն գործքերը էտ կրնային մնալ, որով եւ վանքին շահուն վնասել :

Այս մանր պարագայն անոր համար կյիշեմք՝ որովհետեւ մանր պարագաներուն վրայ է որ կերեւայ ուսանելի կճանչցուի ազնուախոհ ոգին ու փափուկ զգացմունքը :

Կրնար ինքը ոչ միայն զատոնք զանց առնել, հասլանալ իւր ըրած որոշումը յայտնել եւս ընկերակցացն, յորդորել զանոնք, զրգոել իւր աշակերտաց դասը, ու միաբանից պակասութիւններն այպանել, կանոնաց վերջի աստիճանի թուլութիւնները, եւ մեծաւորին անկարող խեղճութիւնը՝ որ իւր ըրած բռնութիւն-

ներովն ու ողորմելի կառավարութեամբը այնպէս ամենուն առջեւ անպատիւ էր եղած՝ որ համարձակ միաբանք մեջերնին կիսուէին կծիծաղէին վրան, եւ ինքը թեպէտ իւր հաւատարիմ լրտեսներուն ձեռքովը քիչ շատ կիմանար, բայց վախէն որ շփոթութիւն մը չէլլէ, — որուն վրայ տարակոյս չունէր եւ որ իւր կործանումը կրնայ բերել, — եւ ոչ փոքրագոյն միաբաններէն մէկուն ըրած պակասութիւնը կհամարձակէր յանդիմանել :

Ինքը ոչ միայն աստեցմէ մէկն այլ չէր ըրած կրսեմք, որովհետեւ գիտէր որ Առաքելոյն ըսածին պէս « Իւրաբանջիւր ընդ անձին համարս տացէ, » (*Հնովմ. ԺԴ, 12*) հապա նաեւ այն *կրօնաւորաց* ու այն *տաւաջակայից* վրայ զարմացած էր ու ըրածնին ու խօսածնին այլ կայպանէր, որովհետեւ կտեսներ որ անոնք ոչ այնչափ առաքինի էին՝ որ իրենց ընկերակցացը վրան բամբասած պակասութիւնները կամ մեծագոյնները չունենային, եւ ոչ իսկ այնչափ արիասիրտ ու անկեղծ՝ որ մեծաւորին ետեւէն ըրածձաղբաձուրթիւնները, պարսաւախօսութիւններն ու դիտողութիւնները համարձակին իրեն դիմացն հանելու :

Պաշտօնի հասնելու, ուզածը ձեռք բերելու, ուզած տեղն երթալու փափագն ու ակնկալութիւնները, ոմանց այլ քշուելու կամ մանաւանդ վնասուելու ու ճամբուն վրայ ձգուելու վախը... զամենայն որ իկէղ-

ծել կյորդորէին, որովհետեւ վախճաններնուն անով միայն կրնային հասնիլ :

Բռնական կառավարութեան մը հարկաւ հետեւանքըն է կեղծաւոր հպատակութիւնը : Վնյ այնպիսի մեծաւորին, ու ցաւայի անոնք՝ որ իրենց ոգին ու սիրտը այն աստիճանի կնուստացընեն :

Արդ զնաց Խորէն վարդապետ ու հեգութեամբ մը յայտնեց մեծաւորին իւր միտքը, այսինքն քէ ստոյգ կերպով լսած ըլլալով ու տեղն իտեղ իմանալով իւր եղբօրն ու անոր ընկերակցաց Ազգին ու հայրենի սուրբ Եկեղեցոյն սիրոյն համար անիրաւ տեղ իկողմանէ միաբանութեանն կրած վշտերը, այնուհետեւն ալ չկրնար իւր խղճովը մնալ անդամ այն միաբանութեան ու գործակից համարուիլ երկց Վարդապետաց դեմ մինչէն հիմա միաբանութեան ըրած անիրաւութեանցն ու այսուհետեւ եւս կոյր գկուրայն ընելիքին, ինչպէս որ նա ինքն միաբանութիւնն բացարձակ կերպով խօսք էր տուեր Հոռովմայ :

Այս ըսելէն ետեւ շնորհակալ կըլլար մեծաւորին մինչէն այն օրը վայելած որ է իցէ բարեացն համար, ու ներումն կիսնդրէր իւր մարդկօրէն բերութեանցը՝ զոր առանց չարութեան սրտի գործած էմ կըսեր :

Բայց այն որ շատոնցուրնէ իմէր վարժեր էր իւր

նպատակացը վրայ կեղծաւորութենէ ուրիշ բան չտեսնելու, Խորեն վարդապետին այս խոնարհական խօսքերն ալ կեղծաւորութիւն կարծեց. չէր մտածեր որ ալ այնպիսի ժամանակ կեղծաւորութենէ ինչ յոյս կըրնար ունենալ նա... : Բայց ինչպէս կարենար մեծաւորը այս խորհրդածութիւնն ընել սրտին յանկարծական այլայլութենէն ու բարկութենէն :

« Կեղծաւոր, պոռաց գլուխը շարժելով, դեռ կհամարձակի՞ս ըսելու թէ սրտի ջարութիւն չունեիր..... Բայց ես գիտեմ քու ջարութիւնդ. գիտեմ քու ինչուս ա հիմա բոլոր ըրած գրգռութիւններդ՝ որ գութիշներն ալ գլխէ հանես : Կեցիր ես հիմա անանկ ընեմ որ դու ալ սովորիս, ես այն անխելքներն ալ որ քու օրինակիդ պիտի հետեւին՝ իմանան թէ իրենց գլուխն ալ ինչ ձիւն պիտի գայ » :

Այսպիսի պատասխանի մը չէր կրնար սպասել Խորեն վարդապետը, ինքն որ ինչպէս վերն ըսինք՝ եւ ոչ իւր սրտակից մտերմացն էր յայտնած իւր սրտշնունքը, որպէսզի անոնց շփոթութեանցը իւր կողմանէ պատճառ ու առիթ չտայ՝ արդ կյանդիմանուէր իբրեւ գրգռիչ եւ ապստամբեցուցիչ :

Հեգութեամբ պատասխան տուաւ. « Աստուած ինքնին գիտէ որ երբէք այդպիսի վատութիւն մտքես չեմ անցուցած, թող թէ գործած. բայց թէ որ դուք ալ, Գերապայծառ, կուգէք զայն գիտնալ՝ կանչեցէք գնով

որ կուգէք ու բող վկայեն ինչ գրգռութիւն տուեր էմ,
ինչ ջարախօսութիւն էմ ըրեր ձեր վրայ: Թող վկայեն
մանաւանդ՝ թէ ընկերութեան մէջ ձեր ու ձեր խոր-
հրրդականաց վրայ ստեպ ստեպ եղած ծաղրածու-
թիւններուն ատեն ես իմ դժկամակութիւնս չէմ յայտ-
նած, ու շատ անգամ այ բողած իմ խոնցս չէմ քա-
շուած... Ձե, Գերապայծառ, չե, ջխաբութիք. կան
գրգռողներ, կան ջարախօսներ, եւ խիստ շատ կան,
եւ անա անոնց ընկերութիւնն է որ կուգ՛մ բողույ,
եւ բողույ մինչեւ իսպնո՛ւ » :

Ուգեց մեծաւորը վկաները կանչել. չե անոնք որ
Խորեն վարդապետին բերնէն ապստամբութեան յոր-
դոր մը լսած էին, վասնզի ինքն այ գիտեր որ ջկային,
հապա իւր հաւատարիմ խորհրդականները՝ որ մե-
ծաւորին բռնութեանցն ու բռնած անյատեն ընթաց-
քին ինչպէս միշտ՝ եւ հոս իսկ վկայ ըլլային միանգա-
մայն եւ օգնական :

Թողունք հոն եղած ողորաւոր աղաջանքները, յոր-
դորները, սպառնալիքները, եւ այլն, ... որ կարող ըլլան
Խորեն վարդապետին միտքը փոխել. որով յայտնա-
պէս կերէնար թէ կճանչնային որ ծանր կորուստ մըն
էր գոր պիտի ընէին :

Այս միայն ըսեմք որ վերջապէս Խորեն վարդա-

պետին հոն ստորագրել տուին քէ ինքը իւր ազատ
կամքովն էր որ կէլէր վանքէն . ու էրք պատճառն
այ կտակաւին որ գրէ՝ պատասխան տուան . « Արդէն
ձեզի երկարօրէն ըսի եւ հասկցուցի . բայց բող եւ
սպագայք զիտնան եւ հասկընան ստոր պատճառը » :
Աս ըսան ու գրէց կտրուկ լակոնաբանութեամբ .

ԱՌ ԽՂՃԻ ՄՏԱՅՍ ԱՆԳՈՐԲՈՒԹԻՒՆ :

Կտրուկ ըսինք , եւ իրանցընէ , վասնզի իւր համա-
ռօտութեանը մեջ շատ ու խնր իմաստներ կպա-
րունակե..... :

Բայց սակայն եւ այս յԱստուծոյ լինէր : Որպէսզի՝
քէ որ Մխիթարեանը ուզենան ճայն հանել հոս հոն գրել
խաբխբել քէ « Մէնք վռնտեցինք Խորէն վարդա-
պետը իւր անարժան վարուցն համար , » բոլոր զիտնան
որ Գեր . Գեորգայ Հիւրմիւզեան , Գեր . Նդուարդայ
Հիւրմիւզեան , Վ . Հ . Արսէնի Կ . Բագրատունեոյ եւ
Վ . Հ . Պետրոսի Մինասեան ներկայութեամբն եւ
ստորագրութեամբը Գիր մը կայ իրենց զիւանին մեջ ,
վաւերացեալ եւ իձեռնագրէ Խորէնայ վարդապետի ,
որ ինքը չէ քէ իբրեւ ստանակ է վռնտուեր , հապա
շատ յորդորանք ու աղաջանք եւս լսեր է որ կենայ ,
բայց Խորէն վարդապետ իւր ազատ կամօքը ուզեր է
էյանել զատուիլ այն միաբանութենէն՝ որ չէ քէ
միայն իւր հարագատ էղբայրը , — անհատ մէկը — ,

հապա ամբողջ իւր սիրելի ԱԶԳԵ մատներ էր միաբանութիւնն այն ու դատապարտէր....

Վերջին փորձ մ'այ ուզեցին ընել իւր անդրդուելի միտքը խախտելու, բայց ոչ ինչ ընդհատ անյաջող էլաւ. և այն :

Յիշեցուցին իբէն թէ այն Ազգն յոր կղիմես՝ այն ազգն է որ Տրդատներ, Յուսիկներ, Ներսեսներ, Խորենացիներ է հալածէր ու ջարաջար մահուամբ սպաններ, զքեզ պիտի պատուէ կամ զքեզ պիտի գլխուն վրայ պտտցընէ..... :

— « Ո՛չ. իմ վախճանս փառք փնտռել չէ, բայց թէ որ փառք այ ուզենայի փնտռել՝ այն էրկնաւոր փառքը կցանկամ և կփափագիմ՝ զոր այն Նրանելիքն ստացան. թէ որ իմ Ազգս մեր ըսածին համեմատ ինծի գայն փառքը կհայրայրէ՝ անկէ աւելի ինչ կայ ինն սիրելի և ուխտիւք ցանկալի » :

— « Լաւ է, գնն ուրեմն, գնն որ էղբօրդ գտած փառաւոր հիւրընկալութիւնը դու այ վայելես որ սորվիս : Գնն որ էղբայրդ խեղճ ողորմելի հիւանդանոցը պառկած, ամենուն էրեսէն ընկած գտնես » :

— « Ապա ուրեմն անա և գօրաւոր պատճառ մ'այ աւելի՝ որ ժամ մը առաջ բողոքմ երբամ այն ընկերութիւնը՝ որ իւր պատուաւոր անդամներէն մեկը այն աստիճանի խեղճութեան է հասուցէր ան-

խիղճ անգթութեամբ : Երբամ խնամել եղբայր մը ' որ իւր քաշածներովն էւ օրինական առաւել ' քան թէ տարիքովն ու բանիւք ինձ պիտի սորվեցընէ թէ ինչ աստիճան պէտք է էս ալ սիրեմ զԱզգն իմ էւ զԵկեղեցի » :

Երբոր տեսան ու լսեցին ալ մանաւանդ իրմէ որ սլ աւելորդ էր հետը հակառակել այն բանին վրայ ' զոր հաստատուն էր որոշած իւր մտքին մէջ, յուսահատութիւնը զայրացոյց ջարաջար մեծաւորին ոգին, ու պռոսաց . « Որովհետէ դու միտքդ դրեր էս երթայ, ու աներեսաբար ալ կ'անդես ու կ'ամառիս, լաւ է, կերթաս, էւ պիտի երթաս հիմա այս վայրկեանին շուտով . զնա՛ քու կորստեանդ » :

Այս ըսաւ ու մէկէն նաւակը պատրաստելու հրաման դրկեց :

Յափշտակեցին Խորէն վարդապետին խուցին էւ գգրոցներուն բանալիքը, որպէսզի տիրէն բոլոր անոր գրոցն ու գրութեանը էւ բոլոր ունեցած նամակացը . իսկ զինքը ' անբնակ խուց մը փակեցին ու կողպեցին մինչէն որ նաւակը ձամբայ էլլէ :

« Զգոյր ինչ անդ իսենեկին (կգրէր մեզ) բայց Խաչն տերունի կախեալ գորմոցն : Անկայ առաջի նորա էւ լայի հեղձամոհմուկ արտասուօք . էւ թողութիւն վասն

իմ ինձանէ խնդրէի եւ վասն որոց յայն անարգութիւն գիտ հասուցանեին » :

Ուրիշ այսպիսի վեճմախոն խօսքերէն ետեւ կըսեր. « Ի վերջնում առեր անդ ի վերայ հասեալ ծանեայ յիռույի քե ճյր ոմանք էին նորա (մեծաւորն եւ խորհրդականք), քանզի եւ ի վերջնումն առեր ծանուցին ինձ լիով զանձինս » :

Ըսել կուգեր քե այն օրը վար առին իրենց կեղծաւորութեան դիմակը, եւ հասկըցայ ինչ մարդիկ եղած ըլլալնին :

« Իմիտ առի (կըսէ) այլ անագան, քե՛ զոր ցայնժամ ցուցանեին ինձ սէր եւ մեծարանս, այն ամենայն առ իշահն օգտի անձանց իւրեանց էր միայն : Յուսահատութիւնն սյլ եւս բաւելոյ ունել զիս յանձուկ որմունս անդ վանացն բանտարգել, ամօք՝ որով, — որպէս եւ ինքն իսկ մեծաւորն խոստովանէր դառնագին սրտիւ յակամայ կամս անձին — դարձեալ խաղ լինէին առաջի Հռովմայ, Գ. Պատնապոյի, Գ. Հասունի, եւ նոցին իսկ վանականաց՝ զայրագնեաց եւ յայլոյ խելս արարեալ գնոսս կատաղեցոյց » :

Մխիթարեանց այս աստիճան Խորէն վաղապետին դէմ զայրանալուն մէկ գլխաւոր պատճառն այ այս վերջի երկու տողով յիշածն է : Հռովմայ սարսափը իրենց արհաւիրքն էր : Այն բանն որ Հռովմայ ական-

ջը կրնար հասնիլ՝ զիրենք կնարսափեցըներ : Ամեն
բանի մէջ Հոռովմ էր մտածութիւննին, Հոռովմ խօսակ-
ցութիւննին

Բայց իրենց թէ մտածութիւնն է. թէ խօսակցութիւ-
նը միշտ երկու տեսակ էղած է. *Ներքին* է. *Արտաքին* .
որ է. միշտ իրարու ամենեւին հակառակ :

Ներքինը այն է որ մեջերնին կըլլայ, է. Արտաքին
այն՝ որ դրսէն կերեցըներ : Համառօտ ըսեմք, Ներ-
քինը՝ իրենց դէմքն է, Արտաքինը երեսնին դրած
ազգածանօթ դիմակը :

Ներքին մտածութիւննին ու խօսակցութիւննին
ազատ է, որովհետէ ջորս պատին մէջ կմնայ, իսկ
Արտաքին բոլոր ցուցուցած կերպերնին ու խօսակցու-
թիւննին՝ իրենց մտացն հակառակ կէՂԾԱՌՈՐՈՒԹՅՈՒՆ:

Թէ որ այն ջորս պատերուն մէջ ամեն օր էղած
դատաստանները, վճիռները, պարսաւները, ծաղ-
րածութիւնները, բշխամանքները . . . Պայը, Գ. Պաննա-
պոն ու Գ. Հասունը (քնղ խեղճ Գօթնցիք, Վէննացիքն
ու Լիբանանցիք,) իմանալու ըլլային՝ այս օրուան
օրս Ս. Ղազարու քարը քարի վրայ ջէին բողուք :
Գիտեն զայն Մխիթարեանք :

Ձեմք գիտէր թէ արդէօք է. զայս կհամարճակլին
ուրանայ

Գիտեն, ուստի է. ամեն ջանք ու ամեն զգուշու-
թիւն կընեն որ մեջերնին էղած խօսակցութիւնները

դուրս չէլէն : Ապա թե ոչ ինչ համարմունք, ինչ սեր, ինչ ասպանութիւն վրանին կրնայ ունենայ Հոռոմ եւ Գ. Հասուն՝ երբ մէյմը ճանցնայ ու հասկընայ թէ բոյոր այն խոնարհական նուաստամիտ նամակներն ու երկրպագութիւնները առ. երեսս կեղծաւորութիւն են, ու բոյոր այն ընծաները՝ կաշառք, զոր ձեռքերնին տայու. երկնցած ատեն՝ սրտերնին կանիծե՛

Թ՛նդ ուրախանայ Հոռոմիր *հարսզասորդոցը* վրայ . . .

Հոռովմայ յիշատակը հոս ալ Գ. Հիւրմիւզին սրտին տազնապն էր . եւ տազնապ այնչափ մեծ՝ զի եւ չկըրցաւ. իսկ ծածկէլ :

« Ի՛նչ պիտի ըսէ նորէն Հոռոմ Տէր Աստուած, ինչ պատասխան տամք նորէն . . . » կհեծեր յուսահատաբար իւր խորհրդականացն ու Խորէն վարդապետին առջէն :

— « Զոր ինչ ճշմարտութիւնն է, Գերապայծառ, » պատասխան տուաւ մեր վարդապետը :

Բայց ինչպէս խօսին գճշմարտութիւն որք « Զսերն ճշմարտութեան ոչ ընկալան » (Բ. Թեւ Բ. 10) որք մանաւանդ « Օտարացան իճշմարտութենէ անտի » (Ա. Տիմ. 2. 5), եւ « Ստեն եւ ոչ առնեն գճշմարտութիւն » (Ա. Յովն. Ա. 6) :

« Ի՛նչ պիտի ըսէ նորէն Հոռոմ » Հոռոմ՝ զոր մինչէն հիմա խաբէր էին. Հոռոմ՝ որուն առջէնը

Փարիզու Մուրատեան վարժարանին վերջին անցքերը եւ երից Վարդապետաց՝ Ազգին եւ որբոց իրաւունքները պաշտպանելու համար ըրած բողոքները՝ այնպէս հասկըցուցեր էր մեծաւորն՝ որ իբր թէ այն Վարդապետաց անձնական պակասութիւններուն հետեւանքներն էին անոնք . Հոռոմ՝ որուն երդմունքներով երկար երկար թղթերով, հաւատոյ ստորագրութիւններով(*) անանկ կհատացընէին թէ վանքին մէջ չկար եւ ոչ ոք որ այն Փարիզու Վարդապետաց բռնած ճամբուն հաւնած ըլլար . այլ ամենքն ալ կգարշէին, կզգուէին անոնցմէ իբրեւ *իներեսիկոսաց*, եւ թէ՛ ամէն Մխիթարեանք մեծ ու պզտիկ *անձնանուէր usրուկ* եւ *աւենահաւասարիւմ հարսակի* եւ գաւակք Հոռովմայ Եկեղեցւոյն, եւ անոր պաշտօնէիցը *աւենահոռ ծառայք*..... :

« Ի՛նչ պատասխան տալ Հոռովմայ » Երբ նա իմանար որ թէ բարուցը թէ կրթութեանը եւ թէ գիտութեանը կողմանէ քարեհամբաւեալ մէկ Վարդապետ մը, որ ոչ միայն ներքնոց՝ հապաւնոյն իսկ արտաքնոց ո-

(*) Հոս յիշեցընեմք մեր սիրելի Ազգայնոց՝ որ Մխիթարեանց իւրաքանչիւրոցն ստորագրութեամբ առ Պապն տուած հաւատոյ դաւանութեանը՝ (յորում զՀայս *հերձուածող*, եւ *արսախոյ յեկեղեցւոյն Քրիստոսի*,..... կկոչեն) Խորէն վարդապետը ստորագրած չէ :

բնն հետն այ որ տեսնուէր՝ անոնց սերն ու համար-
մունքն իրեն կգրաւեր ու վանքին պատիւ կընէր ,
այն՝ որ առաջի Վենետիկոյ Պատրիարքին էւ իւր աս-
տուածաբանիցը էւ Գեր. Հիւրմիւզեանին՝ Աստուա-
ծաբանութեան քննութիւնն ըրած ու քաջութեան
վկայագիրն այ ընդունած էր Պատրիարքէն , այնպիսի
մէկ անձ մը , կըսեմք , կէլլէր միաբանութենէն ու Փարի-
զու Վարդապետաց հետ կմիաբանէր , էւ կէլլէր՝ ոչ
էրէ պատուոյ ու փառաց փափաքանօք , վասնզի շատ
խսկունէր գայն ու հետզհետէ էւս աւելի այ բարձրանա-
լու ու աւելի փառաւորուելու խոստմունքներ կլսէր ,
հապա վասնզի այն գուարթաղէմ պայծառ ճակատը
չէր կրնար կեղծաւորութեան սէւ դիմակը վրան առ-
նուլ , չէր կրնար ինքն այ միաբանութեան հետ ատել
իւր Ազգը , ու օտարաց հաճոյ լինելու համար չէր ու-
զէր որ իւր Աստուծմէ ընդունած քանքարը երբայ
քանքարաբազոյց ծառային պէս բաղէ , որովհետէ
գիտէր ու կճանչնար որ այն քանքարն իրենը չէ ,
այլ աւանդ առած՝ որպէսզի շահեցընէ յօգուտ սյն
Ազգին էւ սյն Եկեղեցւոյն՝ յոր կոչեալն էր զնա էւ
սրբեալ Հոգին ձշմարտութեան :

2է. Փառասիրութեան ու Անճնդիւրութեան ոգին
չէր կրնար իւր վրայ այ տիրել , ինչպէս որ միաբան-
ներուն շատին վրայ տիրէր էր՝ որ պաշտօնի կամ պա-
տուոյ հասնելու համար ո՛ր էւ իցէ միջոց լաւ կհամա-

րէին, Եւ ոչ իսկ միաբաններուն ուրիշ մեծ մասի մը հետ ալ վատացեալ էր նա Եւ նուաստացեալ՝ որ իրենց ճանջցած ճշմարտութիւնն ու ներքին համոզումը՝ զոր ծածուկ իրենց մտերմացը մեջ կըսէին, կգրէին, ու կբողոքէին, զոհեցին մեծաւորին Եւ իւր արբանեկաց ընդունացն յոյսերուն Եւ ակնկալութեանցը, իբրէս քէ Հռովմայ պահանջմունքներուն գիշանելովն ու Ազգը մատնելովը՝ պիտի Գ. Հասունին վրայ յաղթանակ կանգնէին, ու մեծաւորը պիտի էլլար բազմեր Պօլտոյ Նախագահութեան այն Աթոռը՝ ուսկից իւր զօրաւոր ոտխը զԳ. Հասուն՝ կկարծէր որ պիտի կործանէ, ու անոր անընկճելի գլուխը իւր ոտքին տակը ճզմէ, կամ ան ալ չըլլայ նէ՝ գէթ կարդինայութեան կարմիր գտակը (*) ընդունել ի Հռովմայ իբրէս ի վարձ յուղայական մատնութեան, որ Եւ այս ոչ դոյզն յաղթանակ մըն էր զոր կյուսային Աբբացիք կանգնէյու ընդդէմ Գ. Հասունի, Գոյեհացոց, Վեհնացոց Եւ Լիբանանցոց :

Բայց չէին մտածէր որ էքէ վատութիւնն ու մատ-

(*) Այն օրերը խօսք կըլլար Հռովմ որ Լատինայունաց ու Լատինահայոց մեջէն Պապը կուգեր մեյմեկ կարդինայներ շինել : Լատինայոյնք յիրաւի ունեցան ալ գառամեալ եպիսկոպոս մը որ չկրցար երկար առեն վայելել իւր ձերութեանը փառքը, ու մեռաւ : Բայց Լատինահայք՝ կամ մանաւանդ Մխիթարեանք՝ մինչեւ հիմա դեռ կսպասեն ... :

նութիւնը ուրիշին դիտմանցը կծառայեն ալ նե՛րայց ոչ երբեք վատին կամ մատուցին դիտմանցն ու ակընկալութեանցը : Մատնիչը ուրիշը մատնելին առաջ նախ ինքզինքը կմատնէ : Մատնութեան պտուղը՝ անարգութիւնն է . անարգութիւն յաջս Աստուծոյ , անարգութիւն յաջս մարդկան , անարգութիւն յաջս էս այնորիկ՝ առ որ կըլլայ մատնութիւնը :

Իմացան գայն էս Մխիթարեանք , քեպետես ճշ . էս իմացան բնն իրենց փորձովը , որ ինչպէս իրենց խղճին դեմ գործած ազգամատնութեան իբրեւ վարձք երազած ակնկալութիւնները ծուխի պէս ցնդեցան : Ես ոչ միայն էս ոչ մէկ պզտիկ շան մը ջկրցան ձեռք բերել , հապա նաեւ ունեցած ազատութիւննին ու իրաւունքնին էս կորսնցուցին . էս չէք միայն Գ. Հասունին վնաս մը ջկրցան հասցընել՝ հապա աւելի էս անոր իշխանութեանը տակն ընկան . մինչէս ստիպեցան նաեւ այն աղերսանաց բոլերն ու ընծաները գորբիջ մը առաջ իրեն դեմ յաղթանակելու յուսով Հոռովմայ կարդինայներուն ու քարտուղարներուն ու փաստաբաններուն կգրէին կղրկէին , ու կաղաչէին ու կաշառաբէկ կընէին , նոյնպիսի պաղատանաց բոլեր ու յանձնարարական շողորորք աղաչանքներն ու ընծաներն սկսան այնուհետես էս առ Գ. Հասուն դրկել նուաստ վատութեամբ , աղաչելով որ ներէ իրենց ու գրայ վրանին..... :



Իսկ Հոռովմայ դիմաց այսչափս միայն շահեցան՝ որ այս առթուս լաւ մը ճանչցաւ զիրենք Հոռոմ, կըրնէց անոնց հաւքարեայ ոյժը, եւ յայտնի տեսաւ որ ինչպէս շատ անգամ, հոս ալ համբար ոչ միայն ջափագանց էր՝ հապա կարգէ դուրս ջափագանց. իմացաւ անոնց իրական ողորմելի անգորութիւնն, ու արհամարհեց բողոք : Նման այն ըմբշին՝ որ կրկեսը իջնայ առիւծի մը հետ կռուելու, եւ անա տեսնէ որ անիկա՝ առիւծուն մորթը միայն ունի Ողիմպիանու սուակին մեջի կենդանւոյն պէս :

Բայց Մխիթարեանք աղէկ ճանչցան իրենց հակառակորդին ոյժը. որչափ ասելի Հոռոմ իրենց տկարութեանը համար զիրենք արհամարհեց ու նախատեց, այնչափ ալ ասելի իրենք անոր գորութենէն սարսափեցան ու դողացին. ուստի եւ այնչափ առասել անոր դիմացը նուաստացան :

Եւ քե որ իրենց անմեղ Ազգին մատնութեամբն առ Հոռովմ՝ անոր քահանայապետին ու պաշտօնեկիցը տըւին այն *խնդութիւնը*՝ զոր ինչ մատնիչ առարեայ մը Երուսաղեմայ քահանայապետիցն ու դըպրացը (*Մարկ. ԺԳ 11. Ղուկ. ԻԲ 5.*). բայց եւ իրենց բարեսէր եւ անյիշազար Ազգին սիրտը ազդեցին այն *ցաւը*՝ զոր իրենցմէ առաջ նաեւ Մեհրութաններ եւ Վասակներ են ազդեր. « Ախտակցաբնր արտասուես-

ցուր գնւրացողսն հասաւոյ » ... (Շարակ. Ս. Ղեւոնդ.)

Արդ այսպիսի ծանր կորստեան մը ցար, ակնկալութեանց իղերես ելլելը, ամենուն ղիմաց կրելի ամօրոյն նախատիւնը, ու Հոռովմայ արհաւիրքն ու պահանջած պատասխանատուութիւնը բոլոր այս մտածմունքներն ու գգածմունքները կը սեմբ' հետզհետեայնպէս զայրացուցին ու բորբոքեցին զմեծաւորը' որ միտքը դրաւ, որոշէց որ սրտին կրակը Խորեն վարդապետին արտասուացը մէջ մարե...

Նաւակը պատրաստուէր կսպասէր. իսկ ինքը, իւր եղբօրը Գ. Եղուարդայ հետ մեկտեղ մտեր Խորեն վարդապետին խոնցը բոլոր դարանները բացած բղբերը կրննէին, եւ իւր որսին վրայ ընկածի մը պէս ամեն բանի վրայ ձիրաննին երկնցուցած կծողվէին ու կըկոպէին : Հրամայեցին ու Խորեն վարդապետը այն անբնակ խցէն (ուր զինքը փակէր ու բանտեր էին) հանել տուին ու առջէնին կանչեցին :

Մտաւ Խորեն վարդապետ իւր խոնցը ու տեսնելով հոն իւր ամեն բանը տակն ու վրայ' կկարծէր թէ անոր համար էր որ իւր սեպհական բաները կուգէին գատելի վանքին վերաբերեալ բաներէն, եւ իւր բղբերն ու գրքերը, եւ կամ ինարագատէն իւրմէ կամ յարտաբին բարեկամաց ստացած ընծաներն ու յիշատակները'

պիտի բոյլ տային որ առնուր տաներ : Բայց մեծապէս
կիսաբուէր :

« Ահա նաւակը պատրաստ է, պոռաց մեծաւորը,
շուտ գնա՛, մտի՛ր, կորսուէ՛ » :

— Պատրաստ էմ էս էս, միայն թէ կաղաչեմ հրա-
ման տուէր որ բղբերս ու գրբերս ժողովեմ :

— Թղբերդ..... գրբերդ..... դու հոս էս ոչ ասեղ մը
ուրիս քեզի սեփական : Ամենայն ինչ իմս է :

— Այն, Գերապայծառ, իրաւ է էս հոս ասեղ մը
չունիմ, էս հոս ոչ դերձակ էի էս ոչ այ կարուակ.....
Այն կայ հոս քանի մը բան որ Ձերն է, բայց ոչ էս
ամենայն բան, ինչպէս կըսէր : Տուէր ինձ իմ նամակ-
ներս, գրուածներս ու գրբերս այ գեթ յիշատակ կամ
ընծայ առածներս, ու մնացորդը ձեզ ըլլայ :

— Նամակներդ..... պոռացին երկու Արքեպիս-
կոպոս եղբարք մեկ բերան, Նամակներդ..... անոնք
մեր աւանքն են :

— Այո, աւար, յաւ կըսէր, Գերապայծառ. դուք այ
ուրեմն կ'ստատովանիք թէ ըրածնիդ յափշտակութիւն
է ուրիշին իրաւանցը :

Այս իրաւացի պատասխանես տեսնելով մեծաւորն
որ իւր բերնովը բռնուեցաւ, պոռաց բարկութեամբ.
« Ամէն բան հոս իմս է : Վասնզի էս բու մեծաւորդ էմ » :

— Ո՛չ. մի խաբուիք իմ մեծաւորս չէր. էս այս
վայրկենիս ազնտ էմ, ազատ են էս այն ամէն բան՝

որ ինծի կվերաբերին : Նամակներս առանձնական սրբագան իրաւունքներս են, անբռնաբարելիք յամենայն մարդկանէ : Գրուածներս ալ իմ տասներվեց տարուան աշխատութեանս պտուղներն են, Աստուծոյ ինձ տուած պարգէններն են զոր օտար ձեռք յշխանութիւն չունի ինձմէ յափշտակելու : Իսկ յիշատակ ընդունած քանի մը ընծաներս ալ քաղցր են ինձ, քանցր իբրեւ այն սիրելիքը որ բաժանմամբ կամ մահուամբ են իմ սրտես կտրուէր : Ինչպէս միշտ ջանացիք բայց չկրցնաք սիրելեացս յիշատակութիւնը այս սրտէն կտրել ու ջնջել, չէք կրնար չունիք իրաւունք եւ անոնց ինձ տուած տխրագին յիշելիքները ձեռքես կորզել յափշտակել :

— Գնա ուրեմն այն քու սիրելի եղբօրդ աստիս տուր որ դեռ իմ ձեռքես չազատեցաւ . իւր գրած սպաստամբ թողրէրը բոլոր պիտի վանքին դիւանը պահեմ որպէսզի ետեսի եկողներն ալ իմանան ձեր նվըլալը :

— Ըսէք մանաւանդ որ այն ետեսի եկողները ձեր ալ ինչպիսի որ ըլլալը պիտի իմանան . պիտի իմանան քե ինչ սուրբ իրաւունքներ ոտքի տակն են առնուէր ու ինչ դժնդակ բռնութիւններ ու անողորմ անգրութիւններ են տկարաց վրայ բանեցուէր ուժոյ բռնութեամբ : Բայց ես կվախնամ, Գերապայծառ, որ այն քղրէրը չըլլայ քե զանոնք գրողէն ասելի անոնք

մանաւանդ յախտեան նախատինք ըլլան՝ որ իրեն պարծանք համարեցաւ. զանոնք յափշտակել ու ապագայից աւանդել..... Եղբօրս աւետիս տամ կըսէք. ինչ, կկարծէք թէ Եղբայրս ձեզմէ վնիս մը կամ ակնկալութիւն մը ունի՝ որ ցաւի կամ զղջայ ինծի հաղորդած ճշմարտութեանցը վրայ... Ձե, չե, թէ որ ցաւ մը ունենայ նե, անշուշտ եմ որ այս միայն պիտի ըլլայ՝ թէ ինչո՞ն. համար աւելի մանրամասնաբար ու երկարօրէն ամեն բան չգրեց. ինչո՞ն. համար հարեւանցի մը միայն յիշատակեր է եւ ոչ տեղն իտեղը կենդանի նկարագրած այն ամենայն անիրաւ. բռնութիւնն ու հալածանքը՝ զոր իւր ընկերներովը կրէց, եւ զոր ես այ պիտի կրեմ եղեր այսօր, անոնց կատարեալ ընկերակիցն ըլլալու համար : Պահեցէք ուրեմն այն երկու երէք կտոր թղթերը, վասնզի աւելին գտնալու ուրախութիւնն այ պիտի չունենար. պահեցէք անկորուստ, վասնզի ծր պիտի գայ որ այն մտերհակները ձեզմէ պիտի պահանջէ արդարադատ Դատաւոր մը « Որ առանց ակնառութեան դատի » (Ա. Պէտ. Ա. 8.) որուն զիմաց մեծաւոր ու հպատակ չկայ : Գէք մի գրկէք զիս իմ ծնողացս, ազգականաց ու բարեկամաց նամակներէն որ ձեզի օգուտ մը չունին : Տուէք ինձ նաեւ իմ դոյզն գրուածներս՝ որոց եւ ոչ իսկ պետք մը ունիք :

— Գրուածներդ... վանքին մէջ Եղած բաները վան-

քին են : Ամեն բան ըրիք, մեր անունը արեցիք, վնաս չմնաց որ ջհասցըներ . զմեզ Հայոց ատելի ըրիք ու գգուելի, ու հիմա հոստեղի աշխատութիւնները տպելով՝ արգիլելով Հայոց որ այսուհետեւ մեզմէ զիրք մը չգնեն՝ կուգէք մեր հանցն ալ բերներնես կտրել...

Այս ու ասոր նման ցած խօսակցութեանց վրայ էրբ Խորեն վարդապետը տեսաւ որ բռնութեան դիմաց իրանունը լսող մը չկայ ու յուսահատ ճայնով կբողոքէր թէ « Աստուծոյ արդարութեանը կդիմեմ, » երկու Գերապայծառներն ալ մեկբերան գոչեցին գայրացմամբ. « Շնչտ դուրս հանեցէք... կորսուի աջքերնես », ու իրենց բարձրաձայն աղաղակաւ կուգէին խափանել որ արդարոյն բողոքը յերկինս չհասնի.....

Մեկէն զինքը դուրս հանեցին, իշուցին վար, դրին նաւակ, աճապարեցին քաղաք հանեցին որ անցագիրն առնուն ու մեկէն նոյն օրը քաղաքէն քշեն հալածեն :

Այս կերպով անա Խորեն վարդապետն էլաւ այն վանքէն ուր տասներկէց տարի բնակէր էր, ու ամենուն սիրելի եղած էր ու պատկառելի թէ իբրեւ մանուկ տղայ, թէ իբրեւ պատանի թէ իբրեւ ընկեր, թէ իբրեւ ուսանող էր թէ իբրեւ ուսուցիչ : Արգահատող ու եղբայրասէր բնաւորութեամբը ամենուն օգնութեան

կհասներ, եւ ուսմանց եւ գիտութեանց մեջ ընկերներուն վրայ ունեցած առաւելութիւնը՝ ոչ էրէ գանոնք արհամարհելու կգործածէր, հապա իրենց յառաջադիմութեանը նպաստամատոյց լինելու: Վատվոռն բայց միանգամայն եւ խոհական ու անոյշ բնաւորութիւնը՝ օտարագգեաց մասնաւոր սերն ու համակրութիւնը կբաշէր. շատ ճամբորդներէ որ Վենետիկէն անցեր ու Ս. Ղազարու Վանքին մեջ իրեն հետ տեսութիւն ըրեր են՝ յիաբերան գովութիւնը լսեր ենք կամ կարդացեր: Շատ Իտալացի մատենագիրք իւր մեկբանի քերթուածոց քարգմանութիւնը կարդալով փափաքած են հետը ծանօթանալ, ու վանքին դուռն էկած կհարցունեին. « Հայ բանաստեղծը կրնամք տեսնել »:

Այս ամեն ծանօթներուն եւ բարեկամաց՝ եւ ոչ մնաք բարով մը բողոսցին որ Խորեն վարդապետն ըսէ: Նոյն իսկ Վանքին մեջի իւր տղայութեան ընկերացն ու իւր աշակերտացը ջբողոսցին որ վերջի հրածեշտի ողջոյնը տայ, վախցան՝ որ ջբլլայ քէ այն արցունքներէն զոր իրենց բռնաւորութիւնը բափել կուտար՝ ընկերացը սիրտը կակդնայ, բողոքէն մեծաւորին անգբութեանը դեմ ու ստիպէն որ անոր իրաւունքները կատարէ: Մանաւանդ որ այն ժամուն պիտի իմանային նորա՝ Խորեն վարդապետին վանքէն էլլելուն ճշմարիտ պատճառները.....: Ի՞նչպէս այնուհետեւ կարենար մեծաւորն ու իւր հասատարիմ խորհրդա-

կաններն անոնց հաստացուցանել՝ քե « Խորեն վարդապետը իւր անպիտան վարուցն համար քշեցինք » :

Բայց քե որ մեծաւորին ձեռքն էր հրաման տալը որ Խորեն վարդապետ իւր ընկերացն հետ վերջին տեսութիւն մ'ընէ, բայց ինչ իրաւունքով կրնար ինքն արգելույ որ Վենետկոյ ծանօթիցն հետ ջտեսնուի : Ի՞նչ իրաւունքով մէյնը որ անիկա ոտքը Վենետիկ դրասէ. էլաւ. յագատութիւն, անոր ինքնիշխան ազատութիւնը կրնաբարքեր ու մեկէն իմէկ շոգեկառօք դնել կուտար ու կաքսորէր զինքը Վենետկոյ սահմաններէն : Ի՞նչ իրաւունքով անոր ունեցածը բոյոր իրէն կգրասէր ու մերկ կողոպուտ յամենայնէ զինքը ճամբու վրայ կնճեր անգրուբեամբ.....

Ի՞նչ իրաւունքով..... — Անով՝ որով որ « Չխորշեցաւ իբազմածամանակեայ սլեաց Յերոյն » (*Իւսւս. Սող. Բ. 11*). որ զանիկա իւր ձեռքովն ու քրտամբք շինած վարժարանէն մուր ատեն ու անմրէ. ժամանակ ճամբու վրայ ողորմելի կերպով նետեց...

— Անով՝ որով որ տարիներէ իվեր վանքին ու վարժարանին մէջ աշխատող վարդապետ մը առանց մէկ յանցանք մը երեսը զարնել համարձակելու. յանկարծ վարժարանին դռնէն զինուորներով դուրս կըվոնտէր...

— Անով՝ որով որ վանքին մէջ այն Վարդապետաց

քաշածներուն վրայ քիչ մը գրացող մեկն այ որ տեսաւ.՝ ամխիբար տեղուանը արսորեց՝ որ երբայ տեղւոյն վայրենութենէն սիրտը մեծաւորին պէս վայրենացընէլ սովրի...

Ի՞նչ իրաւունքնով... բայց ինչ կտարակուսիմք իւր պատասխանին վրայ. « Օրէնս արդարութեան բռնութիւն մեր եղիցի : Բռնադատեսցուք գտնանկն անիրաւութեամբ : Մի խորշեսցուք իբազմաժամանակեայ այեաց Յերոյն : Դարանակայ լիցուք Արդարոյն « զի դժպիի եղէս մեզ, եւ հակառակ կայ գործոց մերոց « եւ նախատինս ղնէ մեզ գլանցանս Օրինացն » : (*Իմաստ. Սող. Բ. 10*) :

Ահա իւր իրաւունքն, ահա իւր պատճառները.....

« Կարծեցին, (կըսէր Խորէն վարդապետը իրեն նամակին մեջ), կարծեցին երէ կողոպտելովն զիս յամենայնէ եւ ջարաջար ընդ իս վարելով՝ գէթ սփոփանս « ինչ գտանիցէն իսրտի, այլ սխալեցին մեծապէս » : Ինչո՞ւ համար ըսես նե, շատ գեղեցիկ կերպով մը վրայ կբերէ : « Արդարեւ ջտարայ ինչ անտի, կըսէ, « եւ ոչ գպատառիկ մի բոլոր. այլ ընդ իս տանէի « գլախտենական նախատինս բռնութեան նոցա, « որով հաստատինն առաջի մեծի եւ փոքու երէ « քանի՛ ճշմարիտ եւ արդար բողոքքն էին ձեր, եւ « քե քանի՞՞ն եւ ընդ ձեզ վարեայ բռնութեամբ՝

« յորժամ ընդ իս գայն անցս անցուցանեին : »

Ապաքեն այն խօսքերեն այ կիմացուի քե մինչէն այն օրը ոչ Խորեն վարդապետը էն ոչ իւր ընկերակից վանականք կարդացեր էին *Յայտարարութիւն անցից Մուրաշեան վարժարանին* անունով գրքոյկն որ հասկընային քե Գ. Հիւրմիւզեանին էն անոր խորհրդականներուն մեզի դեմ ըրած բռնութիւնն ինչ ատիճանի էր :

Իսկ ետեւի խօսքերեն այն այ կերեւայ քե խաբուած է եղեր մինչէն այն ատեն նաեւ Հիւրմիւզեանց խորագետ կառավարութեանը վրայ, կարծելով քե շատ վարպետ են իրենց ճշմարիտ շահն ու վնասը լաւ հասկընալու էն ըստ այնմ վարուելու ուրիշներուն հետ : « Ուր քե փոքր մի խորագիտութեամբ վարեայ
« էր նոցա, (կըսէ), հարկ իսկ էր արձակել զիս ամե-
« նայն պատուով էն դիւրութեամբ, մի' զի իղերէն
« հանցեն, կամ ունիցին ինչ տայ պատասխանի ամ-
« բաստանութեանցն վասն որ ընդ մեզ դժնդակ գործոց
« բռնութեան . էն երկրորդ անգամ, արհամարհեայ
« իմն գայդու' ցուցցեն էրէ ինքեանք անկարօտք
« իսկ են մեզ, էն քե առ ոչ ինչ համարին զանձինս
« որ իբրէն զիսն իցեն դուզնաքեայ էն փանաքի. վասն
« որոյ էն ոչ իսկ փոյթ է նոցա զբողոց էն կամ այլ զինչ
« էն պէտ գրութեանցս իմոց : Բայց իՏեառնէ լինէր
« էն այս, որպէսզի լաւ էնս ծանիցի ոզի նոցա... էն զի

« մի է. մի լիցի ինձ առաջել՝ իբրու զի գտիրելիս բո-
« դուցում, է. երկրորդ՝ զի որ հետեւողն ձեզ լինել,
« կամէի, է. հաղորդ վշտաց ձերոց գտայց է. անիրա.
« գրկանացն (*)..... » :

Խորէն վարդապետին հետ նաակը մտան նաեւ
Գ. Հիւրմիւզին երկու գլխաւոր խորհրդականները,
մանաւանդ թէ լրտեսները. մեկը վարդապետ՝ մեղմելս
բարքովը ամենայն վանականաց ծանօթ է. ամենուն
ատելի (**), է. միւսը աշխատաւոր եղբայր՝ միամտու-
թեամբը ամենուն ծաղրելի ներքնոց է. արտաքնոց, է.

(*) Այս խորհրդածուրիւնները Խորէն վարդապետ իւր վեր-
ջի վայրկեանները ըրաւ. նաեւ այն աշխատաւոր եղբօրն առջեւ
որ զինքը ճամբայ կղներ : Ոչ միայն չկրցաւ. նա դեմ խօսել,
հապա նաեւ լիուլի իրաւունք ունենալը խոստովանեցաւ, խոս-
տանալով միանգամայն որ իբրեւ եղածին դարման իւր ունե-
ցածը չունեցածը բոլոր ետեւէն ձեռքը կհասցընէ : Եւ լիբաւի
վերջէն ընդունեցաւ Խորէն վարդապետ պզտի հին սնտուկ մը՝
կղպանքի տեղ չուանով մը կապկպած, մեջն ալ քանի մը կը-
տոր հինումին պատուած ձերմկեղէն լեցուցած, ու մէկ քանի
կտոր ալ բողբ իւր աւելորդ ու նետած բռքերէն ժողված :

Ասով կփափագէր անշուշտ մեծաւորը իւր պատասխանա-
տուութիւնը բերեցընել ու խարեութեանը փաստ մը գտնել :

(**) Այս վարդապետը վերակացու է միանգամայն վանքին
նորընծայիցն ու քահանայացու աշակերտացը : Թող ուրա-
խանան Մխիթարեանքեւմտերիմքնոցա այս նորածին դասուն
վրայ որ Հիւրմիւզեան ոգին կատարելապէս պիտի ունենան...

մեծաւորին բացարձակ ղեկավարն ըլլալովը՝ ամե-
նայն վանականաց կասկածելի է. նախանձելի.....

Ասոնք տարին Խորեն վարդապետը մտուցին իրենց
կազմարարին աղոտտ խանութը, է. հոն մինչդեռ.
աշխատաւոր տիտանեան եղբայրը ոտքի վրայ կեցած
պահպանութիւն կընէր, միւս վարդապետը սկսաւ
ըսել Խորեն վարդապետին կարմրելով ու կակագելով
(որով ըսածնէրուն սուտ ըլլալը կյայտնուէր). « Հայր
« Խորեն, դուն ալ գիտես քէնրջափ սեր ունիմ վրայ,
« ու ինչպէս մեծ համարմունքով խօսէր եմ միշտ քու.
« բնաւորութեանդ, խոնարհամտութեանդ, հեզու-
« քեանդ, աշխատասիրութեանդ ու իմաստութեանդ
« համար, ասով կիմանաս քէնրջափ կցաւիմ այս
« կերպով վանքէն ելլելուդ..... ամախնջ ընենք, եղածը
« եղած է. համբերութիւն : Արդ քէ որ ինծի շնորհք մը
« կուգես ընել, Գերապայծառին ալ խիստ հաճոյական
« բան մը, կիւնդրեմ որ այս տեղս երկու տող գիր մը
« գրես, քէ վանքէն ելլելդ ամենեւին անոր համար չէ
« որ իբր քէ անիրաւ բռնութիւն մը կրէր էս կամ
« ուրիշ պատճառ մը ունեցեր էս մեծաւորին կամ
« վանքին հետ արուելու, հապա ազատ կամօրդ,
« է. ամենայն հանգստեամբ է. պատուով էլար վան-
« քէն. վասնզի դուն ալ գիտես, սիրելի, քէնրջան
« խօսքեր գրուեցան այս միջոցներուս խեղճ Գերա-
« պայծառին դեմ որ իբր քէ բռնաւոր է, անգութ է,

« անիրաւ ե, եւ այն, նր մեկը ըսեմ... : Հիմա քու
« ելլելուդ վրայ այ ն գիտե ինչէր այ պիտի չգրեն :
« Անշուշտ, սիրելի, դուն քու առաքինութեամբդ
« այս բոլոր եղածին կներես ու բան չես խօսիր... :
« Անով կցուցուի ապագայից՝ որ սուտ են այս ամե-
« նայն ամբաստանութիւն, եւ դուն մեծ վարձք կը-
« վաստըկիս..... » :

Գ. Հիւրմիւգեանին հաւատարիմ պաշտօնեայն ճըշ-
դութեամբ կատարեց իւր պարտքը, պետք էր որ Խո-
րեն վարդապետն այ իւր խղճմտանքին ցուցուցած
ուղիղ ճամբէն չխտորեր, ու այն պաշտօնէին՝ իւր
բարերարութեանը դեմ յարած որոգայթին մեջ չբռ-
նուեր : « Կներեմ, այն, պատասխան տուաւ արտա-
սուօք . կներեմ այն անիրաւ թշնամանաց՝ որոց ան-
պարտ են : Գուք ինքնին կխոստովանիք որ իմ այսչափ
տարուան անցուցած կեանքս ու ըրած հաւատարիմ
ծառայութիւններս՝ արժանի չէին այս կերպով փշօք
պսակուելու : Բայց « Մեր հաւատքն եւ յոյսը յԱս-
տուած է », (*Ա. Պէտ. Ա. 21*) յայն՝ որ կբազալերէ մեր
սիրտն ու կսրբէ մեր արցունքները՝ խոստանալով որ
մեր վարձքը բազում են յերկինս (*Մատթ. Ե. 12*) : Իսկ
այն գրուածքն՝ որ կուգէք ձեզ տամ թէ ես իմ ազատ
կամօքս էլի իվանաց՝ արդէն տուի ես զայն առ Գեբա-
պայժառ, ինչպէս որ գիտէք, բայց գրել միանգամայն

քե « Զիս Գերապայծառ, ամենայն պատուով արճրկեց, ամենայն բարեկամութեամբ եւ սիրով », ինչպես իւր աստիճանին, իմ այսչափ տարուան հաւատարիմ ծառայութեանցս եւ իմ օրինաւոր խնդրոյս կվայելէր, զայդ՝ ոչ, ոչ երբէք կրնամ տայ, վասնզի ճշմարտութեան հակառակ է այդ վատ վկայութիւնը, ինչպես որ ջե քե միայն իմ խիղճս՝ հապա նոյն իսկ ձեր խղճմտանքը պէտք է վկայէ եւ բողոքէ » :

Արդեօրայս գօրաւոր պատասխանին պատմութիւնը իւր պաշտօնէին բերնէն լսելու ատեն՝ յաւելցնեց Գ. Հիւրմիւզեան իւր սովորական գօրաւորագոյն պատասխանին՝ քե « *Խղճմտանքիդ մէջը փսխեմ* (*)... »

Ելան կազմարարին այն աղտոտ ու մութ կրպակէն մանաւանդ քե ըսեմք ծուղակէն՝ ուր ինչպես անշուշտ վերի պատմութենէն իմացան ընթերցողք, որոշեր էին Խորէն վարդապետին ձեռքէն անուշ լեզուի խաբութեամբ մը՝ բոյոր իրենց ըրած անիրաւութեանցն ու տառապանաց շրոյ գօրաւոր ձեռնագիր վկայութիւն մը ձեռք բերել, որով պիտի բոյոր աշխարհի առջեւ սուտ հանէին ճշմարտութեան բողոքը :

(*) Տես իՅայտարարութեան անցից Մուրատեան վարժարանին, էջ 132 :

Ո՞վ չզարմանար, կամ սյ ճիշդ ըսեմ, ո՞վ չպժգար այս վատ գործողութեանը վրայ..... :

Այնուհետեւ, աճապարեցին որ Խորեն վարդապետին անցագիրը շինեն : Բայց վախնալով որ էր Խորեն վարդապետն այ իրենց հետ մեկտեղ առնելու ըլլան՝ Տաճկի հիւպատոսը, որուն անձանօք չէր Խորեն վարդապետ, չըլլայ բէ անոր վրայի այն անսովոր այլայլութիւնը տեսնելով՝ պատճառն ուզենայ բննել, որով է. Մխիբարեանց անախորժ՝ գուցէ է. ծանր հետեւանքներ առաջ գան, վերոյիշեալ վերակացու է. ատենապալիր վարդապետը յանձնեց զԽորեն վարդապետ այն աշխատանքը եղբօրը որ տանի իրենց պտղածախին խանութը պահպանէ, ու ինքը անցագիրն առնելու վագեց :

Պտղածախին խանութին քովերը կնստեր Իտալացի պատուանոր արդարակորով ու տերութեան ծառայութեանը մեջ աշխոյժ մեկ անձ մը, որ քանի մը տարի առաջ Փարիզ եղած ժամանակը՝ մեծ ու կարեւոր ծառայութիւններ էր ըրած Մխիբարեանց, բայց յետոյ երբ մեր Մուրատեան վարժարանին մեջի քաշած վերջի հալածմունքները տեսաւ ու ճշմարտութեան ջատագով կեցաւ, խորշելի եղէ. յաջս Մխիբարեանց, ու բոլոր իւր ըրած ծառայութիւններն ու բարեկամութիւնը մոռցուեցան ինոցանէ մանասանդ բէ է. ատելի էս եղեն :

Խնդրեց Խորեն վարդապետ այն աշխատանքը եղբորմեն՝ որ բոլոր տայ իրեն երբայ այն մէր բարեկամեն քիչ մը ստակ մուրայ իւր ճամբուն ծախքին համար :

Այս խնդիրը ընդունելի եղէ, որովհետեւ անով Միւրաբեանց վրայէն կերպով մը կրէքեւնար նաեւ այն աւելորդ ծախքը :

Փամաղրութեան համառօտ պայմանը լմննայուն պէս Խորեն վարդապետը դարձաւ պտղածախին խաւնութիւնը : Հագաւ պտղածախին մեկ մաշած շապիկը, եւ վրան ալ բարակ մեկ վերարկու մը՝ գոր իրեն համար պատրաստեր էին, ու քիչ մը վերջը նաեւ անցազիրն ալ հասնելով՝ մեկէն նաեւակ մտան, գացին շոգեկառաց կայարանը, խոթեցին զինքը կառքին մէջ, ու երբ քանի մը վայրկեանէն ազքերնէն սրացաւ աներեւոյր եղէ, ալ հանդարտ սրտով եւ ուրախութեամբ դարձան աւետելու մեծաւորին քե « Լմնցուցինք . գլուխնիդ ողջ կենայ . ալ վախ չկայ »

Եւ ասիկայ այնչափ աւելի ապահովութեամբ մը ըսած են անշուշտ՝ որչափ աւելի հյութին մը ու անհակառակասեր ընթացք մը տեսեր էին նաեւ նոյն օրը Խորեն վարդապետին վրայ . որ ճանաչելով ու ճանչցնելով եւս անոնց որ ինքը Վենետիկ հասնելէն ետեւ՝ ալ ազատ էր ամենեւին ուզածին ջափ քաղաքին մէջ կենալու եւ ուզած տեղն երբալու, եւ քե՛ բաւական կարողութիւն ալ ունէր — երէ ուզենար — արդար

րութիւն պահանջել, ու Մխիթարեանց ինչ ըլլալը բո-
լոր քաղքին մեջ հռչակել եւ ճանչցընել, բայց ցուցը-
նելու համար քե ինքը ճրջափ անլիշաջար է՝ յանձն
առաւ անոնց վերջին անտեղի հրամանին ալ անսա-
լու, եւ մինչեւ երիկուն բերանն ալ բան մը չդրած
ճամբայ էլաւ ժամ մը յառաջ հեռանալու, քողոյս այն
« Ս. Ղազարու կղզին որուն չորս կողմը շրջապատող
« հոտած ջուրերուն պէս լճացեալ է եւ ապականեալ
« նաեւ այն մեջի բնակչաց բարբն ու մտածութիւնը... »
կգրէ ականատես սրամիտ գաղղիացի ճամբորդ մը
(Լապրանշ) :

Շոգեկառքը զինքը մինչեւ Վենետիոյ սահմանա-
գլուխը պիտի տանէր : Հասաւ հոն Խորեն վարդապետ,
բայց քաշած բարոյական ցաւերէն այնպէս տկարա-
ցեալ՝ որ երեք օր իջեւանին մեջ անկողինն անցուց :
Բժիշկներն իմանալով իւր միտքը քե դեռ կուգէ ճամ-
բորդութիւնը առաջ տանիլ մինչեւ իՓարիզ՝ ոչ միայն
առաջ երթալն արգիլեցին՝ հապա նաեւ խորհուրդ
տուին որ քիչ մը ետ դառնայ Ռեքոարոյի առող-
ջարար ջուրերը երթալ : Հոն շաբբուան մը մեջ
բաւական կազդուրեցին յետոյ փութացաւ Խորեն վար-
դապետ ճանապարհ էլաւ վագելու իւր սիրելի հարա-
գատին գիրկն իյնալու, որ իւր ցանկալի եղբօրն անա-
կընկալ հրաշալի ազատութեան յորն ընդունելով՝

անբաւ գոհութիւն էր տուեր Աստուծոյ ողորմութեանը, ու ձերունի Սարգիս վարդապետին ու բոլոր աշակերտաց դասուն հետ անհամբերաբար անոր գալստեանը կապատեր օրերն ու ժամերը համբէյով, աչքը ճամբուն վրայ մնացած :

Չէր գիտեր որ իւր հարագատը ինչէր էր քաշած վանքն, ինչէր ճամբուն ու ինչէր Այլեան լերանց գագաթը, ուր սաստիկ ճիւղէ մը բռնուելով՝ որ կանգնաչափ ու կէս բարձրացաւ, ու վրան բարակ վերաբկուէ մը գատ ուրիշ պատուարան ջունենայով, լերան ստորոտն իշած ժամանակը, այլ վրան կարողութիւն ջէր մնացէր որ ճամբան շարունակէ : Հոն ինն օր դարձեալ ցաւոց անկողիին անցուց, օտար էրկիր ու խեղճ տնակի մը մէջ անճր էւ անօգնական :

Մարդկանց այս աստիճանի անգրութիւն ցուցուցած ժամանակ՝ « Այլ Աստուած ողորմեցնւն նմա . էւ ոչ նմա միայն — կըսեմք Առաքելոյն հետ — այլ էւ մեզ, զի մի տրտմութիւն ի վերայ տրտմութեան կըրիցեմք : » (Փ/Վ. Բ. 27)

Վերջապէս անցեալ տարի Օգոստոսի 21ին հասաւ Խորէն վարդապետ ԻՓարիզ, իւր սիրելի հարագատին էւ Սարգիս վարդապետին քով, « Որպէս ճնճողակ ապրեալ յորոգայթէ որսողաց » (Սղմ. ՃԻԳ. 6.) էւ մոռցաւ քաշած նեղութիւնները՝ այն զգացած ան-

պատում բերկրութեամբ, տեսնելով միանգամայն եւ լսելով նոցա քաշածները մինչեւ այն ատեն.....

Զղանդադեցաւ այնուհետեւ ու գրեց առ Սրբազան Պատրիարքն Կ. Պօլսոյ իւր հպատակութեան գիրը .

Աճեճապատիւ Սրբազան Տէր .

Քանզի ժառանգաւորին Աստուծոյ պարտք իսկ են, որպէս ոմն յեկեղեցւոյ վարդապետացն ուսուցանե, ընդ օրինաւոր առաջնորդան հպատակ կացեալ իսլայժառութիւն եկեղեցւոյ վիճակին իւրոյ հոգալ, վասն որոյ եւ ես որ անդստին իմանկութենէնուիրեայս եմ իսպաս պաշտաման սեղանոյ Տէառնեւ իբարգաւաճանս եկեղեցւոյ նորա սրբոյ՝ քաջիկ իվերայ հասեալ՝ յայլոց նախ, ապա եւ յանձին ուրեմն փորձոյ՝ եթէ չիք այլազգ հասանել իկէտ անդր գեղեցիկ նպատակին առ որ զպաշտօնեայս իւր կոչեցեալն է Տէր, եթէ ոչ ընդ ուղղակի եւ ընդ անընդմէջ մտեալ հովուապետաւ ազգին իւրոյ եւ գաւառի, պարտանձին վարկայ, ազատամիտ կամօք կշռեալ զամենայն, իգիրկս բնիկ եկեղեցւոյ հայրենեաց իմոց փութալ, գորոյ ուխտիւք չափ ըստանձնեայն եր իմ գնդեւոր յանձանձանս ըստ իմովսանն չափոյ եւ կարողութեան :

Տգիտութիւն եւ ատելութիւն որ զոգւոյ աջս խաւարեալ մրացուցանեն՝ յաջադեցին զուղղափառ եկեղեցի Ս. Լուսաւորչին, արատ իմն յանարատ դաւանութիւն անդր արկեալ հարսին Քրիստոսի : Իմ ջան եւ վաստակ նուիրեալ լիցի իբան եւ իգիր շատագով հանդիսանայ եւ պաշտպան սուրբ եւ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյս Հայաստանեայց ընդդէմ հակառակորդաց նորա որ յընտանեաց եւ որ յօտարաց անտի :

Առ այս խնդրեալ պաղատանօք զԱստուծոյ սրտագիտի շունջ եւ զաջ օգնականութեան, որ ասացն եթէ « Առանց իմ ոչինչ կարեք առնել », խոնարհիմ բղբովս այսուիկ մաղբանաց եւ իխնդիր օրհնութիւնքեր հաճութեան ձերոյ եւ հուապետա-

կանիդ խնամոց, դասանեալ եք առ ձեզ իսկ երանն բանք զոր առաքելոց նախորդացն ձերոց սրբոց ասեր Քրիստոս, եք՝ « Որ ձեզ լսե՛ ինձ լսե » : Վասն որոյ ակնկալեալ մեծաւ յոսով զարդիւնս ինքնայօժար այսր իմոյ հպատակութեան ժողովել անյապաղ՝ ոչ ինչ բնաւ երկբայիմ, ամենապատիւ Տէր, եք ինչոյն սէր եւ ինձ հանդիպեցիք որով հերոն գարգոյ Հարազատաս իմով զՍմբրոսիոս Վարդապետան հայրագորով խնամօք խանդադատեցայք, մասն բաժնի գառառագեղ օրհնութեանցդ եւ ինձ հանեալ կրտսերոյ որդւոյս Աստուածապատիւ Տեառնդ եւ Հօր հոգեւորի :

Խ. Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ :

Փարիզ, 27/15 Օգոստոս 1837.

Որուն եւ այս մխիթարական ու պատուաւոր պատասխանին ընդունեցաւ .

*Արժանաւեճար Տեառն Խորեմայ Շնորհաշուք Վարդապետի
Սիրելոյ մերում խնդայ խօրիսոս .*

Խնդութեամբ հոգւոյ ընկալաք գձեռնագիր քուոյր յայտարարութեանդ Ձերոյ որ ի 27/15 ամսոյս, յորում յետ ազատամիտ կամօք կշռելոյ զամենայն, եւ յետ ուրեմն յանձին եւս փորձոյ ըզգաստ լինելոյ ճշմարտութեանն, եք « Նուիրելումն իսպասահարկութիւն սեղանոյ Տեառն եւ իբարգաւանման Եկեղեցւոյ նորա սրբոյ, չիք այլ ազգ ժամանել ի կետ անդր նպատակի պարտուցն կատարման եք ոչ ընդ անմիջական հովանաւորութեամբ մտեալ իւրումն ազգայնոյ սեպնական Առաջնորդի », ուր ուրեմն պարտաւոր զանձն դասանեալ էք, եւ իբրամբ զՁեր հպատակութիւն առ օրինաւոր իշխանութիւն մեր եւ փութալ իզիրկ հայրենի եկեղեցւոյ եւ ազգի :

Տայս իսկ անձնական վկայութիւնդ Ձեր խրախուսեալ, եւ

վստահացեալ ի խոստովանութիւն անկեղծ շրթանցոյ, ակն ունիմք Տերամբ, քե ոչ անագանեսչիք անշուշտ տալ գծշմարտութեանս յայտնի եւ անվրեպ հաւաստիս ի հանդիսի Ձերումդ ազգասիրական փութոյ եւ անձնանուէր ծառայութեանց ի պայծառութիւն սիրեցելոյ ազգիս եւ ի պաշտպանութիւն ուղղափառ վարդապետութեան սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց :

Սովին աներկբայ վստահութեամբ գտեր եւ զինամս մեր հայրականս ի վերայ Ձեր հովանաւորել փութացեալ, եւ մաղբելով զաստուածապարզեան օրհնութիւն եւ զառատածիր շնորհս Հոգւոյն սրբոյ ի վերայ Ձեր,

Մնամ ողջունի սուրբ սիրոյ եւ յարգանաց

Ձերում արժանապատուութեան միշտ բարեացակամ եւ աղօթարար ,

Պ. Կ. ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Թ. 618 ի Պատրիարքարանի Ազգիս Հայոց.

Կոստանդնուպոլիս 29 Օգոստոս 1837.

Սրբազան Պատրիարքը յուղարկած էր միանգամայն եւ հետեւեալ հայրապետական կոնդակը .

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Տեր Յակոբ Արքեպիսկոպոս եւ Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ յայտ առնեմ, զի Սա ինքն Արժանապատիւ Խորեն վարդապետ Գալֆայեան հրաժարեալ ի հպատակութենէ Պապին Հռոմայ եւ ի միաբանութենէ Մխիթարեան ուխտին, ազատ կամօք եւ անձնանուէր հրպատակութեամբ ընկալաւ գիտգետոր ի շխանութիւն իրաւաստութեան աստուածարեալ Հայրապետի ամենայն Հայոց Սրբազան Կարողիկոսին Սրբոյ Էջմիածնի, եւ եւս յօժարամիտ մատուցեալ առ մեզ գգիր հպատակութեան եւ կալոյ ընդ հայրենական

խնամովք մերովք եւ յաշորդաց մերոց առ ի ծառայել հաւա-
տարմութեամբ Դուստորջական Եկեղեցւոյս, ընկալաք զնա
իրբնն որդի հարազատ եւ ուղղադասան Վարդապետ Հայաս-
տանեայցս սուրբ Եկեղեցւոյ, եւ տուաք հրաման եւ ազատու-
թիւն մերովս հոգեւոր իշխանութեամբ ըստ քահանայական սուրբ
կոջմանն իւրոյ՝ զոր ընկալեալ ունի արդէն վաւերական ձեռ-
նադրութեամբ, վարդապետել եւ կատարել գամենայն աստ-
ւածային պաշտամունս ըստ արարողութեան եւ ծիսի մերս
սուրբ Եկեղեցւոյ ի Հայկազեան Վարժարանին, որ ի Փարիզ,
եւս եւ յամենայն ուրեք: Յանձն արարեալ զնա իշնորհս սուրբ
Հոգւոյն մաղթեմք զի անխտոր ընթացեալ իշաւիղս ճշմար-
տութեան օրինակ բարեաց գանձն ընծայեցուսցէ իշինութիւն
հաւատացելոց եւ իսլայժառութիւն Հայաստանեայց սուրբ
Եկեղեցւոյս:

Պ. Կ. ՅԱԿՈԲ

Արքեպիսկոպոս

Տուեալ եղև օրհնութեամբ վկայագիրս այս ստորագրու-
թեամբ մերով եւ կնքով յամի Տեառն 1857 օգոստոս 30 իսլա-
ւիարքարանի Հայոց որ ի Կ. Պօլիս:

Խորեն վարդապետն եւս միւս երէք վարդապետացս
հետ ազգային ծանր եւ կարենոր աշխատանքի մը
գործակից պիտի ըլլար, որ էր Փարիզու Հայկազեան
Վարժարանին Վերատեսչութիւնը: Ուստի եւ Խնա-
մակայաց ժողովոյն այս գիրը գրեց.

Մեծապատիւ եւ Ազգասէր Խնամակալք.

Հայրենեաց սերը որ դեռարողրօջ հասակես ի վեր սրախ
մեջ կարծարձի՝ երկար մտածութենէ ու կշռելէ ետեւ տեսաւ
որ նպատակիս ու ջանիցս լրմանը համար ազատագոյն ասպա-

րեզի մը կկարօտի : Այս գեղեցիկ ասպարեզը ինձմէ ոչ հետու եր եւ ոչ դժուարին իգտանել : Արդէն եղբայրս Ամբրոսիոս վարդապետը Փարիզու Հայկազեան Վարժարանին մէջ, որ ձեր խնամակալութեամբը կգարզանայ, ազգին հետգհետե օգտակար ծառայութիւններ կընէր թէ դաստիարակութեամբ եւ թէ տպագրութեամբ ք :

Երկու եղբարցս՝ Ազգին ու իրարու վրայ ունեցած սերն ու ախորժակաց նմանութիւնն ու միարանութիւնը կպահանջէր նաեւ գործոց ու աշխատութեան նմանութիւնն ու միարանութիւն : Եւ ահա այս միարանութիւնն էր որուն իխնդիր ելլելով՝ ամսոյս 21ին հասայ հոս Տերամբ, եւ ոչինչ ընդհատ եղբօրս բազմամեայ տեսութենէն՝ մխիթարուեցայ տեսնելով եւ Վարժարանիս բարեկարգութեանն ու յառաջադիմութեան պտուղներն ու մեծամեծ ապագայ ակնկալութիւնները, որ ձեր եռանդուն ազգասիրութենէն կվկայեմ որ ամենայն իրօք կրնայ յուսայ Հայաստան :

Արդէն սկսայ եւ եղբօրս պետք եղածին մէջ օգնելու : Բայց աւելի իմ եռանդս ու ձեռնտուութիւնս յուսամ ցոյցընելու երբ այս ամսօրեայ աշակերտաց պարապոյ օրերն անցնելէն ետեւ սկսիմ ինձ վերաբերեալ դասախօսութեանց եւ սլաշտօնին պարապել :

Յուսալով որ սիրելի ազգերնուս գարգացմանը համար ունեցած եռանդս ձեր երկտող հաճութեան գրովն այ կբարեհաճիք եւս քան գեւս արժարծելու, կմնամ

Մեծապատիւ եւ Ազգասեր Խնամակալացոյ

Աղօթարար ծառայ

Խ . Վ . Գ Ա Լ Ֆ Ա Յ Ե Ա Ն :

Խնամակալաց պատուական ժողովը փութացաւ իւր նոյն ժամանակուան մեծապատիւ Նախագահին ձեռօքը այս պատասխանին յուղարկել .

Կ. Պօլիս, ըստ մեր 4 Սեպտեմբեր 1857.

Արժանապատիւ Տ. Խորեն վարդապետ Ազգասէր սուրբ Հայր.

Ձեր Արժանապատուութեան բարի համբարը արդէն զՁեզ ճանչնալ տուած էր մեզի եւ մեր Ազգայնոց, որ քեպեա գուրկ Ձեր տեսութենէն՝ սակայն այդ բարի համբարը գրաւական մը կըլլար մեզի, որ օր մը Հայրենասիրութիւնը Ձեզ նման ազատամիտ հօր մը սրտին մէջ ալ յաղթանակ պիտի կանգնէ. ահա այս փափաքելի յօւրը ընդունեցինք Ձեր պատուական գրութենէն որ ի27/13 օգոստոսի ստորագրեալ, առ մեզ ուղղած էիք:

Անտարակոյս եմք, որ Ձեր Հարագատին ճշմարիտ նմանութիւնը յանձին կրելով եւ գերապատիւ Հարց Տեսնոն Սարգսի եւ Տ. Գաբրիելի հայրական խնամոց եւ սիրոյն հետեւելով, կատարեալ ազգասիրութեան ցանկալի ասպարեզին մէջ Ձեր անձնանուիրութեան տաղանդները բազմապատիկ առաւելութեամբ կարդինաւորեք, որով եւ Ձեր Չորեցուն Աստուածընտիր Վարդապետացոյ բարեաց յիշատակները միշտ նախանձելի պիտի հանդիսանան իներկայս եւ յապագայս:

Անա այս անկեղծ զգացմամբ կշնորհաւորեմք Ձեր հայրութեան զովելի վերադարձը մեր անյոյժ համակրութեան եւ սիրոյ հաւաստեաց հետ՝ զոր կնուիրեմք իբրեւ գրաւական մեր գործակցութեանը իդաստիարակութիւն Հայկազեան մանկատոյն:

Առ Ամենապատիւ սրբազան Պատրիարքն ուղղեալ նամակը յանձնեցաւ նորին սրբազնութեան, որ եւ մեծ բերկրութեամբ սրտի ընդունելով իւր Հայրական օրհնութիւնը եւ սիրոյ ողջոյնը Ձեզ կնուիրեք շնորհելով իւր կողմանէ յատուկ օրհնութեան կոնդակ մը, զոր գրոյս հետ կուղարկեմք՝ իկատարեալ մխիթարութիւն եւ յանդորրութիւն սրտիդ:

Վստահ եմք որ Հայկազեան վարժարանիդ ներքին կարգաւորութեանց ու յարաբերութեանց մէջ Ձեր եռանդուն ձեռքն

տուութեամբն ալ աւելի մեծ օգուտներ պիտի կարենամք տեսնել ու վայելել :

Մնամք Հայրութեան Ձերոյ միշտ բարեացակամք՝ իղիմաց Խնամակալաց ժողովոյն Նախագահ

Խոնարհ ծառայ

ՊԵՏՐՈՍ ԽՈՐԱՍՍԱՆՃԵԱՆ-

Այս ազգային պաշտօնական բոլորէն զատ՝ զանազան ուրախակցութեան եւ քաջայերութեան բոլոր ալ ընդունեցանք հետզհետե յամենայն Հայ գաղթականութեանց, որ այս յորը՝ իբրեւ ազգային մեծ աւետիս մը ընդունեցան, հրատարակեցին ազգային լրագրաց մեջ, եւ իրենց ուրախալի զգացմունքը սրտաբուղի բանիւք եւ առ մեզ յայտնեցին :

Ասկէ զատ նաեւ շատերն ալ եղան՝ որ թեպէտ Խորեն վարդապետին հետ անձամբ ծանօթութիւն ալ չունէին, բայց իւր համբաւոյն անձանօք ջըլլալով, վտարացան իրենց ազնիւ սիրտն եւս անօր ծանօթացընել իրենց սիրալիր ու մեծարոյ բողբերովը, յորոց քաղցր է մեզ գէթ մեծապատիւ Մովսէսեան Տ. Մկրտչին գրած բազմաթիւ ցանկալի բողբերեն մեկը հոս յիշել .

Ամենապատիւ Տեսուն Խորենայ Շնորհագարդ Վարդապետ Հօր

Անձկալոյ խնդալ :

« Այն երջանիկ ու բարերաստ օրերէն իվեր յորում արժանացանք հիւրասիրութեամբ պատուել Ձեր քաղցրիկ ու սիրելի Ծնողացը համեստասուն Քրոջը հետ մեկտեղ Ձեր անձկալի

հարագատ եւ մեր Հոգեկցորդ սիրելի Ամենապատիւ Տէր Ամբրոսիոս վարդապետ Հայրը, հարկ չէ նշանակել թէ որչափ մեծ ու բարձր համարումն ունեցանք Ձեր պատուական գերդաստանին վրայ, եւ ինչ աստիճան հաղորդութիւն անստգիւտ սիրոյ դրոշմեցաւ մեր սրտին մէջը . բայց արդեօք նոյն կետին Ձեր ցանկալի անունը եւ յիշատակը անծանօթ եւ հեռ.ի էր մեր սրտէն . միթէ այն Ձեր Հ. Խ. Գ. անմահ ու սքանչելի երգերովը մեր հոգւոյն ծանօթացած չե՞նք մի . միթէ այն բարեբաղդ օրերը որ Սիրելի Հարագատիդ հետ քաղցր տեսութիւն կ'վայելէինք, առանց Ձեր քաղցր յիշատակը ընելու օր եւ ժամ կ'անցնէր մի . եւ քանի անգամ արդեօք երագեցինք եւ խորին հառաչանօք մաղթեցինք աչ թէ, կարելի պիտի ըլլայ որ օր մը Ձեր Սիրելութիւնն ալ նոյն տարաբաղդիկ գերութեան յոսձէն ազատելով վերադառնայ իւր գերդաստանին գիրկը :

Ահա, « ո՛վ խորք Աստուածային հիանալի տնտեսութեան » : Ահա վերին նախախնամութիւնը նոյն կետին լսած ու ընդունած էր մեր սրտին հառաչանքը . եւ օրհնեց ու պսակեց մեր իղձը, եւ վերադարձոյց գՁեզ ձեր Սիրելի հարագատին գիրկը, ուստի կրնանք այժմ մեկտեղ ցնծութեամբ սրտի զոչել . « Ահա ուրախութիւնք մեր լցեալ են եւ կատարեալ » :

« Ներեցէք Անձկալիդ իմ այսու առօրիս իյուշ ածել Սրբութեանդ այն « *Յիշատակ Սիրելեաց* » սրտառուջ բանաստեղծութիւնը, զոր իմուտս նորոյ տարւոյս այլ յայլմէ խորին յափշտակութեամբ կերգեիք : Ձ՛նր սիրելիսդ արդեօք իյուշ ածեիք, եւ զ՛նր նոր տիս ն՛նր գարուն նոր քիստ եւ ծաղկունս բաշձալիք . եւ զ՛նր ձիրս իժամանակէն եւ ն՛նր առուրս ցանկալիք :

Ահա անշուշտ յայտնապէս Ձեր մտքին մէջը ուշի ուշով առաջադրած, եւ քանի մը ամիս յետոյ իզորձ դրած Փարիզ վերադառնալուդ ճիշտ պատմութիւնը եւ նկարագիրը երգած էք . ուստի չպիտի գարմանաք երբ մենք ալ այս կողմէն արձագանգ կրկնենք նոյնպէս Ձեր « *Յառաջին մանուշակն* » սխրալի երգոյն . — « Ձայն քո անոյշ եհաս մեզ ձայն քոյ ծանօթ սիրուն մանուշակ » ... քանզի « ցանգ սրտառուջ եւ քաղցրը իմն էր առ մեզ Անուանդ յիշատակ » :

« Առ. Սրբազան Պատրիարք Հայրն եւ առ Խնամակալաց ժողովս ուղղեալ Ձեր ցանկալի նամակները անպատում ցըն-
ծութեամբ սրտի կարդացինք, եւ իպաշտօնէ խնամակալաց
ժողովոյն կողմանէ խրկուած նամակէն իզատ յատկապէս ա-
ռաջին նամակ մը խրկած եմ . բայց սովորական ուղիով չխըր-
կելուս համար անշուշտ եմ որ կորսուած է, ուստի այս երկրորդ
նամակաւս մեր շնորհակալու յարգանքք եւ անկեղծ սրտին
զգացմունքք հանդերձ ողջունի սիրոյ նուիրելով, համբոյր
Սրբոյ Աջոյդ մատուցանեմ, եւ կշնորհաւորեմ Ձեր բարերաս-
տիկ ու շնորհաբեր գալուստը . որ չէ քէ մեր սրտին խնդու-
քեան ու մխիթարութեան առիթ եղէ», այլ բոլոր Ազգանոց
մեծ պատիւ մատուցիք. եւ մանաւանդ Խնամակալացս այ մեծ
քաջաչեքութիւն եւ խրախոյս, որ Հայկազեան վարժարանիս
տեսչութիւնը եւ խնամքք Ձեզ նման բազմարդիւն ու պատ-
ւական անձանց Տեսչութեանը յանձնուած ըլլալով, անտարա-
կոյս եմք որ մեր սրտին ուխտը աճեցուն արդեամբ պիտի
պսակուի :

« Մեր Առաքելիկ որդեակը Ձեր Սրբութեանը ներկայա-
ցընելու համար աւելորդ է յիշելը : Արդէն Ձեր սիրելի Հարազա-
տին միջոցաւ ծանօթացած էք նմա . եւ մենք շատ բաղդաւոր
կհամարիմք զմեզ որ մեր Սիրելի որդեկին եւ մանաւանդ մեր
սիրելի ազգայնոց գաւակունքք Ձեզ նման պատկառելի եւ
Սրբասուն Հարանց դաստիարակութեանը յանձնուած է :

Ընդունեցէք մեր սրտին ջերմեռանդ շնորհակալութեանց
անկեղծ հաւաստիքք :

Մնամ Սրբութեան Ձերում

Խոնարհ ծառայ

ՄԿԻՏԻՉ Ն. ՄՈՄՃԵԱՆ .

Կ. Պօլիս, 14/26 հոկտեմբեր 1857.

Բայց Խորէն վարդապետին գլխաւոր մխիթարու-
թիւնն եւ ուրախութիւնը իւր խղճին ուղղութիւնն ու

սրտին հանդարտութիւնն էր . անոր համար ծանր ջերեւցան աջքին այն նեղութիւններն զոր կրեց առջի բերան ընդ պաշտօնակից վարդապետացս՝ իգրգոութենէ յաջադկոտաց էս իջարախօսութենէ անհաշտ քշնամեաց յառաջադիմութեան Ազգիս :

Տեսան սորա որ էրից վարդապետացս մեկուն Փարիզէն հեռանալուն վրայ ինչ վատ յոյսեր էս ջարասիրտ ուրախութիւն որ ունեցեր էին՝ բոյորն ալ բովերնին մնաց, տեսան որ այն մեկ էլլողը՝ — Գաբրիէլ վարդապետն —՝ ոչ էթէ ինչպէս որ կկարծէին (մանաւանդ թէ ըսեմ կփափագէին) ու ամենուն ալ կուգէին հատացընէլ՝ գատուելու հեռանալու համար էր իսիրելի ընկերակցաց իւրոց, այլ իրենց գործոյն էս ընդարձակ մտածութեանցն համեմատ՝ նաեւ ընդարձակ յասպարեզ մ'ալ մտնելու իսեր էս յօգուտ եկեղեցւոյն մերոյ սրբոյ էս Հայրենեաց, տեսան որ գմեզ պակասած ու տկարացած կարծած ժամանակնին՝ Աստուած մեզ ուրիշ քաջագօտի օգնական մը կուտար էս ընկեր էս եղբայր սիրելի ըստ հոգւոյ էս ըստ մարմնոյ, տեսան որ մեր այսպէս գորանալուն ժամանակ իրենք կտկարանային, մտածեցին — չգիտեմ սրտի ո՞ր ազնիւ գգացմանէն շարժեալ — որ հնարք մը գտնեն գմեզ ալ տկարացընելու, որ թէ էս զիրենք ջեր ալ կրնար գորացընէլ՝ բայց գմեզ պիտի տկարացընէր ու եղծանէր. էս այն՝ բաւական էր « Կապուտակ նա-

խանճուն » (Եղիշ.) աջուրները ուրախութեան ու մխլա-
քարութեան մութ կրակովը պլպլացընելու :

Բոլոր իրենց շանքն ուղղեցին փակելու Փարիզու
վարժարանը , ու այս ազգասիրութեան ու ճշմարիտ
աստուածպաշտութեան վառարանը մարելու հիմ-
նայատակ քանդելու : Իբրեւ թէ ասոր աւերակներուն
վրայ իրենց ջարութեան դրօշը պիտի աւելի յաղթու-
թեամբ ու վառօր սաւառներ..... :

Բայց երբ էս այս էսս ոչ յաջողեցաւ , երբ արտաքին
մատնութեամբ կաշառակուրժ հնարքին բոլոր ընդու-
նայն էլան , էս վերջապէս նոյն իսկ Գաղղիոյ հզօր տե-
րութիւնը ստիպեալ ինզօրագոյն իրաւանց էս ինճմար-
տութենէն՝ մերժեց անոնց մատնութիւնը էս հրաման
տուաւ մեզ որ կարող լիցուք ազատ վարժարան բա-
նայ բոլոր Գաղղիոյ տերութեանը մէջ , — այն ստեն
ուրիշ հնարք մը գտան Հիւրմիւզեանք իրենց ջարու-
թեան ու վատութեանն ամենայից մթերանոցէն , որ է
իրենց սիրտը :

Ես իրացընէ այն անսպառ հանքին սեպնական
արտադրութիւնն էր նաեւ այն հնարքը , որ էր՝ ար-
տաքնոց ղիմաց անյաջող եղած մատնութիւնը՝ Ազգին
ընել , իբրեւ թէ Ազգը տղու մը պէս կարենային պիտի
խաբել :

Բայց արդեամբք շատ իսկ ճանչցան յամօք իւրեանց՝

որ միայն Գաղղիոյ ազգը, միայն Օսմանեան դուռը չէ որ իրենց ստուրբիւնները վերջապէս կճանչնան, կմերժեն ճոխ կաշառքները, ու բշուառ ճշմարտութեան վերջապէս արդարութիւն կընեն :

Ճանչցան, կըսեմք, որ Հայոց ազգը իւր ողջամիտ դատաստանաւը գիտէ ընտրել թէ ո՞ր է ճշմարիտ ազգասիրութիւն եւ ո՞ր ճշմարիտ աստուածալաշտութիւն : Ուստի եւ զգաց ու իմացաւ թէ բշնամեաց կրօնական ամբաստանութիւնները՝ բոլորն ալ սուտ էին, եւ թէ անոնց Վարժարանիս դէմ ըրած ամեն հալածմունքները թէ եւ ուղղակի մեզի դէմ ալ էին, բայց մեր վնասն ալ ուրիշի չէր՝ բայց երբ լրութեան Ազգին, որոյ եւ մեր անդամքն էմք եւ պաշտօնեայք, թէ եւ դուզնաբեայ թէ եւ տկար :

Ապաքեն քաշեցինք երկարատեւ նեղութիւններ, բիւր վշտերու եւ ցաւոց մեջ տազնապեցանք եւ կտազնապիմք, — ինչո՞ւ ծածկեմք, — բայց ո՞չ երբեք սրտերնիս թույլացաւ իւր նախկին եռանդէն, եւ ոչ երբեք յուսահատութեան ալիքներէն ընկճեցաւ, այլ ծովածուփ նաւու մը պէս աջքը միշտ սեւեռեալ իւր առաջնորդ աստեղը « Արդարութեան արեգական » վրայ, ժուժկալեց համբերեց այն ամենայն տառապանաց՝ զոր բշնամիք եւ սուտ էղբարք թէ թէի տուած մեզի հասուցանել ջանացին :

Եւ ահա այն ծանր վշտաց ու տառապանաց մեջն էր որ հասաւ Խորեն վարդապետն ու մտաւ Փարիզու Հայկազեան վարժարանը, որ իրաւցընէ փորձարան մըն էր ճշմարիտ աստուածաբանութեան եւ հայրենասիրութեան, եւ արիւրաբար սկսաւ աշխատիլ իրեն յանձնուած պաշտօնը փառօք կատարելու :

Այս աշխատութեան եւ ջանից մեջն է նա այս համառօտ տեղեկութիւնն ալ գրած ժամանակնիս, եւ ամենեւին տարակոյս չունիմք որ քաջութեամբ պիտի յարատեւէ եւ նա ողորմութեամբն Աստուծոյ, ասկէց ալ ասելի ծանր եւ տաժանելի աշխատութեանց համբերելու, եւ այն դժուարին ասպարեզին մեջ ուր էջ նահատակել' էյանել փառօք, յաղքական պսակն ընդունելով իմեռաց « Հանդիսապետին եւ մարտադրին Քրիստոսի » (*Մարկ. 16.*) վասնզի

Հանդիսադիր մերոյ մարտին

Զէ իցեղէ հողեղինին .

ինչպէս կըսէ մեր աստուածագգեաց հայրապետն Ս. Ներսէս Շնորհալի :

Աւելորդ կհամարիմք Խորեն վարդապետին մտաւոր ջբնաղ ճրիցը վրայ, եւ մանաւանդ բերրողական եռանդուն աշխուժիցը ու մեր Հայկական լեզուին մեջ ունեցած հզօր գօրութեանը ու բազմալեզու եւ մատենա-

գրական հմտութեանցը վրայ ալ քանի մը խօսք ընել, վասնզի արդէն շատ իսկ ծանօթ է այն ամենայն ազգայնոց է. օտարաց, մանաւանդ իւր մինչէն ցայժմ հրատարակած քերթուածներովը, որովք արժանի էդէն որ Եւրոպացի համբաւաւոր մատենագիր մը, որ է միանգամայն քաջ հայագետ՝ Տ. Ե. Տիւրքիէ գրէ է. կոչէ գմեր Հայկազն Քերթողը

ՄԻ ԻՄԵՇՄԱԳՈՅՆ ՔԵՐԹՈՂԱՅ ԺԱՄԱՆԱԿԻՍ :

« Je regarde M. CORÈNE comme UN DES PLUS GRANDS POETES CONTEMPORAINS. »

(M. E. DULAURIER.)

Եւ այս վկայութիւնը այնպիսի ժամանակ մը կընդունի մեր սիրելի *Ազգային Քերթողը*, ուր Լամարթին է. վիկտոր Հիւկո կփայլին.....

Բայց Տ. Տիւրքիէ այսչափովս ալ կարծես գոն չըլլալով՝ ուրիշ տեղ մըն ալ աւելի կբացատրէ իւր միտքը ու կըսէ.

« S. ԽՈՐԷՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԼԱՄԱՐԹԻՆՆ Է. »

« M. CORÈNE est le LAMARTINE DE L'ARMÉNIE. »

(M. E. DULAURIER.)

Ասոր նման դատաստան ու բաղդատութիւն մ'այ գաղղիացի ուրիշ համբաւաւոր մատենագիր մը , Տ. Ռոմէն Քոռնիւ , անցեալները կընէր ' իւր գեղեցկահիւս մէկ նամակին մէջ , զոր գրեց առ Ամբրոսիոս վարդապետ , մեր ազգային Քերթողին մէկքանի քերթուածոց *Մասեաց Աղաւնիին* մէջ հրատարակած գաղղիարէն արձակ քարգմանութիւնը կարդայէն ետքը , դեռ սիրտը « Այն զովաշունչ ու ականակիտ բանաստեղծութեանց անոյշ բուրմամբքը լեցուած » ինչպէս որ կըսէ իւր թղթին մէջ .

ԱՌ ԳԵՐԱՊԱՏԻԻ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ (*)
ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ .

Փարիզ , 16 օգոստոս 1858 .

Գերապատիւ Տէր ,

Ձեր բարեկամներէն մէկը հաճեցաւ տալ ինձ յընթերցումն ձեր *Մասեաց Աղաւնոյն* հատորները , ուր ձեր հարազատին Տեառն Խորենայ քանի մը բանաստեղծութիւնը կարդացի :

(*) AU VÉNÉRABLE AMBROISE V. CALFA

DIRECTEUR DU COLLÈGE NATIONAL ARMÉNIEN .

Paris, 16 août 1858 .

Vénérable Monsieur ,

Une personne de vos amis a bien voulu me mettre sous les yeux la collection de votre *Colombe du Massis*, où j'ai lu quelques poésies de M. Corène Calfa, votre frère. L'esprit a ses

Ինչպէս որ սիրտը՝ այսպէս նա եւ միտքն իւր երախտագիտութիւնն ունի . այն հաճոյական բերկրութիւնները զոր միտքը կզգայ՝ կսիրէ զանոնք իրենց աղբիւրը վերադարձնել, ու պարտք մը կատարելու ժամանակ՝ միանգամայն նոր ախորժ մըն է զոր մատակարարէ նա անձամբ անձին :

Այո՛, Տէր, ամենայն անկեղծութեամբ կխոստովանիմ որ ես վերջի աստիճանի սխրացայ այս զովաշունչ ու ականակիտ բանաստեղծութենէն, ու անոր քաղցրածաւալ բուրմունքը դեռ եւս հոգւոյս վրայ կզգամ : Այս առաջին անգամն է որ արեւելեան հանճարոյն ազատարձակ ու յուսափետուր բոխը զուգընթացեալ տեսանեմ այն ճշդութեան ու զօրաւոր ոճոյն հետ՝ որ արեւմտեան հանճարոյն կնիքն է : Ասիկա բարեգուշակ Հիմէն մըն է որ կրնայ բանաստեղծներու նոր ազգի մը ծնունդ տայ, գուցէ եւ նոր արուեստի մը :

Ձեր շնորհաբեր *Աշաւիիկն* եւ զայն եւս իմացայ որ ձեր հարազատը նաեւ Լամարթինեայ *Դաշնակները* հայերէն է բարձմաներ ու կուգէ եւս իյոյս ընծայել : Ձեմ զարմանար այն մասնաւոր համակրութեանը վրայ որ զինքը դէպ իայս մեծ քերթողին է ձգեր : Ես ատոր մեջ երկու քերթողաց հոգւոցն ու հանճարոյն

reconnaisances aussi bien que le cœur; les satisfactions qu'il a ressenties, il aime à les faire remonter à leur source, et en remplissant un devoir, c'est un nouveau plaisir qu'il se donne à lui-même.

Oui, très-sincèrement, Monsieur, j'ai été charmé au plus haut point de cette poésie si fraîche et si pure, et j'en sens encore mon âme toute parfumée. C'est la première fois qu'il m'est donné de voir le libre et splendide essor du génie oriental ainsi associé à la précision et à la puissante méthode qui caractérisent le génie de l'Occident. C'est là un heureux hymen qui peut donner naissance à une nouvelle génération de poètes, à un art nouveau peut-être.

J'apprends aussi par votre gracieuse *Colombe*, que M. votre

ծածուկ եղբայրութիւն մը կնշմարեմ. եղբայրութիւն՝ որ այն-
չափ անելի մարդուս սիրտը կշաբժե՝ որչափ անելի երկուքեր-
բողաց տարիքին մեջի հեռաւորութիւնը կմտածէ :

Սխրաչի հակադրութիւն մըն է այս, եւ միանգամայն, ինչ-
պէս որ կհաւատամ, բարերախտ գուշակութիւն մը՝ անսնալ
այս նորասքանջ պայծառագեղ աստղը՝ որ երկնից երեսը
կծագի, իւր առաջին հայեցուածովքն ողջուն տայով այն վե-
հափայլ արեւուն՝ որ ղիմացի կողմէն կիջնայ ու դէպ իհորի-
զունը կխոնարհի :

Այն Մուսայն որ ձեր ազնուական եղբօրը կներշնչէ՝ ամենէն
մեծն է ու ամենէն անելի արժանին իյսել : Սգաւոր Հայրե-
նեաց Մուսայն է ղա՛ որ իւր ամենէն անելի փառաւոր յիշա-
տակները չորս կողմն առած, իւր ցրուեալ որդիքը իրեն կը-
կանչէ, ու բոլոր աշխարհքի բացատրէ այն ցաւերը՝ զոր ինքը
չկրնար մեղմացընել, ու այն ակնկալութիւնները՝ զորոնք
չկրնար բողոյլ որ մեռնին երբան :

Ձէ, մի տարակուսիք, Տէր, եւրոպա՛ ու մանաւանդ Գաղ-
ղիա, առանց խանդադատելու պիտի չլսեն այն ողբերը՝ որ
այնքան սրտառուչ են ու այնքան պերճախօսութեամբ երգեալ:

frère a traduit en arménien les *Harmonies* de M. de Lamartine et qu'il va les publier. Je ne suis pas étonné de la sympathie particulière qui l'a attiré vers ce grand poète: j'y vois la fraternité secrète des âmes et du talent, fraternité que rend plus touchante encore la distance des âges de ces deux poètes. C'est un charmant contraste, et c'est aussi, je le crois, un heureux augure de voir cette jeune et vive étoile qui apparaît au ciel, saluant de ses premiers regards le large et majestueux soleil qui descend et se penche à l'horizon.

La muse qui inspire votre noble frère est la plus grande et la plus digne d'être entendue; c'est la muse de la patrie en deuil, s'entourant de ses plus glorieux souvenirs, appelant à elle ses enfants dispersés et disant au monde entier ses douleurs

Մեկ բանի մը վրայ միայն ես կցաւիմ, գոր եւ կհամարձակիմ ձեզ ըսելու, կցաւիմ կըսեմ որ ձեր սիրելի ազգային Քերրոյր այնպիսի լեզու մը կխօսի՝ (Հայերէն) որ մեզ անձանօք է. ուստի եւ իւր գեղեցիկ քերթուածները միայն բարգմանութեան տօճոյն ծրագրաւն է որ կընամք ճաշակել: Բանաստեղծութիւնը, մանաւանդ Քնարերգակ բանաստեղծութիւնը՝ չկրնար փոխանցուիլ, ամենէն աւելի ճարտար բարգմանութիւններն ալ անկարող են մեկ լեզուէն իմիւս անդր անցուցանել ոճոյ ու զգացման այն փափուկ գունագանութիւնները՝ որ բանաստեղծութեան հրապոյրքն ու զօրութիւնն են :

Փափագելի էր ինձ որ ձեր հարագատը գաղղիական տաղաչափութեան հմտանար, ու բուն իսկ զնա իւր առնուր իբարգման : Լամարքինի ամբողջ մեկ գործը բարգմանել կըցող, ու ինքնին իւր քերթուածները գաղղիական արձակ չափաւ իրեն պէս բարգմանող մեկու մը համար, անտարակոյս եմ, որ քանի մը ամիս բաւական է որ գաղղիական տաղաչափութեան կանոնացն ու պայմանաց հետ ընտանենայ :

Կաղաչեմ որ իմ այս խորհուրդս ընդունի նա իբրեւ վկայու-

qu'elle ne peut calmer, ses espérances qu'elle ne peut laisser mourir.

N'en doutez pas, Monsieur, l'Europe et la France en particulier n'entendront pas sans émotion ces plaintes si touchantes et si éloquentes. Je n'éprouve qu'un regret, et je me permettrai de vous le dire : c'est que votre cher poète national parle une langue qui nous est inconnue, et que nous ne puissions lire ses beaux vers que dans le pâle décalque d'une traduction. La poésie, surtout la poésie lyrique, ne peut se transposer ; les traductions les plus habiles sont impuissantes à faire passer d'une langue dans une autre ces délicates nuances de style et de sentiment qui font le charme et la puissance de la poésie. Je désirerais, pour M. votre frère, qu'il s'exercât à la poésie française et qu'il en fit son interprète.

քիւն այն առանձին համարման՝ գոր իւր հանճարոյն վրայ ստացայ ու այն անկեղծ ըղձիցն ու տենչանաց՝ գոր իւր քերթողական ապագային վրայ ունիմ. ինչպէս նաեւ այն եռանդուն համակրութեանը՝ գոր քերթողը ազդեց յիս ձեր ազնուական ու թշուսն ազգին վրայ.....

Հաճեցեք, խնդրեմ, իմ զգացմանցս այս բացատրութիւնն իրեն հաղորդել, եւ ընդունել ձեզ եւ իրեն համար իմ անձնանութիւնմանս ու ակնածութեանս մեծարանքները :

ՌՈՍԷՆ-ՔՈՌՆԻԻ.

Ուրիշ գաղղիացի բանաստեղծ մ'ալ, Տ. Յ. Ռուբէք, բարեկամի մը ձեռօք ընդունելով ու կարդալով Խորեն վարդապետին « *Օրհնեալ որ սիրեն զհեզն Հայաստան* » սրտառուիչ ողբոյն քարգմանութիւնը, հետեւեալ շնոր-

Après avoir traduit un volume de Lamartine et pouvant mettre lui-même en prose française, comme il l'a fait, ses propres poésies, quelques mois lui suffiraient, j'en suis sûr, pour se familiariser avec les règles de notre versification et avec notre rythme.

Je le prie d'agréer ce conseil comme un témoignage de l'estime particulière que je fais de son talent, de l'intérêt sincère que je prends à son avenir de poète, et aussi de la vive sympathie qu'il m'a inspirée pour votre noble et malheureuse nation.

Veillez, je vous prie, lui transmettre cette expression de mes sentiments et recevoir, pour vous et pour lui, l'hommage de mon dévouement et de mon respect.

ROMAIN-CORNUT.

հակառութեան բողոքը կգրէր առ Բարեկամն, որ էս
նա հաղորդէց առ մեզ, գաղղիացի քերթողին մեր
հայկազն քերթողին վրայ ունեցած տպաւորութիւնը
ուզելով մեզ հասկըցընէ :

Փարիզ, 26 մարտ 1858 (*).

Սիրելի Բարեկամն,

Ամենամեծ ախորժանօքը նկատւոյ գԱւեսաբերն Հայասանեայց :
Խորէն վարդապետին զիս իւր յիշմամբը պատուելը՝ տարակոյս
չկայ որ ինձ համար մեծ բան է. բայց ուրիշ բան մը կայ զոր
ես այս պատուէն անելի վեր կհամարիմ, այս է՝ զեղեցկահիւս
քերթուած մը կարդալ. զդոյն զայդ ուրախութիւն խորին կերպով
զգացի ես յընթեռնույ իմ անդ զբարգմանութիւն Խորենեան
քերթուածոյն *Օրհնեայ որք սիրեն զհեզն Հայասան* :

Ա՛հ, սիրելիդ իմ բարեկամ, այս քերթողական հատուածոյն
զգացմունքները, նկարները, կորովալից խոյանքներն, իմաս-
տուն դարձուածներն ու պերճախօսութիւնը կարդալուս առեն՝

(*)

Paris, 26 mars 1858.

Mon cher ami,

J'ai reçu avec le plus vif plaisir le *Messenger de l'Arménie*.
Que M. Calfa m'ait honoré de son souvenir, c'est sans doute
beaucoup pour moi; mais il est une chose que je mets au-dessus
de cet honneur, c'est la joie de lire de beaux vers; et cette joie,
je l'ai bien profondément éprouvée en lisant la traduction de la
pièce de vers de M. Corène Calfa intitulée : *Bénis soient ceux
qui aiment la pauvre Arménie*.

Ah! mon cher ami, à la lecture des sentiments, des images,
des hardiesses, des tours savants, de l'éloquence de ce morceau



մեծապէս ցաւեցայ որ մարդկութիւն գուրկ է իպարգեւէ անտի լեզուաց՝ զոր Աստուած տասուերկու ձկնորսացն շնորհեաց : Յայտ իսկ է որ իմ զգացած ախորժակս կրկին պիտի ըլլար՝ քե կարող լինէի բնագրին վրայ կարդայ, վասնզի այս բարգմանութիւնը, քե եւ աղուոր յոյժ ինքնին, բայց պէտք է որ քերթողական բուրմունքէն կորուսած ըլլայ, որ ամանէ աման պարպուելուն միշտ կցնդի :

Կաղաչեմ որ իմ անունովս շնորհակալ ըլլաս քերթողին ու բարգման՝ իմ անկեղծ զարմացմանս : Իւր եռանդուն հայրենասիրութիւնը զիս խանդադատեցոյց. եւ զիտես որ հայրենասիրութիւնը ինչ յարզ ունի Գաղղիոյ մեջ : Սրտիս խորը քափանցեց այն խոր դառնութիւնը, այն քաղցր եւ փափուկ փափազը, ու այն տխուր անուշութիւնը՝ որ այս քերթուածոյն տիրական զծերն են : Համառօտ ասել, ընդ Տեառն Խորենայ սխրացայ ու պահ մը սիրեցի այն շքեղ Հայաստանը, ու պահ մը եւ ես ՀԱՅ եղայ :

Այս յետին պատրանացս տպանորութեամբն է որ կաղաչեմ

de poésie, j'ai bien vivement regretté que l'humanité ne soit pas douée de ce don des langues dont Dieu gratifia autrefois les douze pécheurs de l'Évangile. Sans doute le plaisir aurait été double si j'eusse pu lire dans le texte original cette traduction si belle en elle-même, mais qui a dû laisser perdre de ce parfum poétique qui s'évapore toujours par le transvasement.

Veillez avoir l'obligeance de remercier en mon nom M. Calfa et d'être auprès de lui l'interprète de mon admiration bien sincère. J'ai été ému de son ardent patriotisme, et vous savez qu'en fait de patriotisme on s'y connaît en France; j'ai été pénétré de cette amertume profonde, de ce regret doux et tendre, de cette poésie; pour me résumer en quelques mots, j'ai admiré, j'ai aimé un instant avec M. Calfa cette splendide terre de l'Arménie, et un instant, j'ai été ARMÉNIEN.

C'est sous l'impression de cette dernière illusion que je prie

գլխորէն վարդապետ ընդունել սիրալիր գաջ հայրենասիրական եղբայրակցութեան, եւ..... կուգէի ըսել, Քերթողութեան :

Ներէ ինձի այս յափշտակութիւնը. բայց աղուոր բանաստեղծութիւն մը կարդալու ատեն՝ մարդ կփափագի եւ ինքնին բանաստեղծ ըլլալ..... :

ՅՈՒԼԻՈՍ ՌՈՒՔԷՅ.

Ո՛հ, ինչ քաղցր, ինչ մխիթարական բան է Հայու մը համար՝ լսել օտարազգւոյ մը, Գաղղիացւոյ մը բերնէն այս սրտառուօջ խօսքերը .

« *Սիրեցի այն շքեղ Հայաստանը, ու պահ մը և ես ՀԱՅ եղայ.* »

Ո՞չ ապաքէն պետք է շնորհակալ ըլլամք մեր ազգային Քերթողին որ մեր լքեան ու բշուռու Հայրենիքը սիրել կուտայ եւ ազգաց օտարաց... ու այն ժամանակն որ բուն այն Հայրենեաց որպիք, խնրք Հայեր, իրենց ազգութիւնը կթողուն կուրանան՝ Հայ բանաստեղծի մը քնարին սխրալուր ճայնը օտարազգւոյն սիրտն եւ ոգին նախանձ եւ փափագ մը կշարժէ Հայ ըլլալու.....

M. Calfa d'accepter une bonne poignée de main de confraternité patriotique et... j'allais dire poétique.

Pardonnez-moi cette usurpation. Mais quand on lit de belle poésie, on voudrait tant être poète!.....

JULES ROUQUETTE.

Գաղղիացւոյն վրայ մեր Հայկազն Քերթողին ըրած մեծ տպաւորութիւնը լսեցիմք, լսենք նաեւ նոյնպիսի մեծ տպաւորութիւն եւ զգացմունք մ'ալ Իտալացւոց արդի ամենեւնաւի հռչակաւոր քնարերգակ Ալեհարտի Քերթողինը, որ մեր Լամարքինին, — ինչո՞ւ գաղղիացւոյն Տիւրքիէի հետ մեք ալ պիտի ջըսեմք, մեք Հայկազունքս ուրախութեամբ եւ պանծանօք, — այն մեր Լամարքինին հետ « Առանձին մտերմութիւն ունենալուն ամենամեծ յարգը կգգայ. » ինչպէս կգրէ :

Վերոնա, 16 մայիս 1858 (*).

Գերապատիւ Բարեկամ,

Ձեր նամակն ընդունած օրս ինձ համար կատարեալ տօնի օր մը եղաւ.....

Անդստին առաջին անգամ զձեզ տեսնելուս Բանաստեղծի հոգի մը նշմարեր էի եւ իձեզ. ապա քէ ոչ անկարելի բան մը կերեւար ինձ՝ որ դուք այնչափ սրտի երեսելի ազնուութիւն, այնչափ նուրբ ու մշակեալ հանճար մը ունենաք, ու ձեր ներքին մտածութիւնները բանաստեղծութեամբ ազուցանելու պէտք մը չգգաք : Եւս առաւել որ ձեր գաղափարաց կարգը պէտք էր

(*)

Verona, 16 maggio 1858.

Egregio Amico!

Fu una vera festa per il mio cuore il giorno che ricevetti la vostra lettera.....

Fino dalla prima volta che io vi ho veduto, mi parve di scorgere in voi l'anima d'un Poeta; chè mi sarebbe sembrato strano, con tanta gentilezza visibil di cuore, con tanta agilità di

շատ անգամ բախձագին ըլլար, որովհետեւ ձեր ամենագգայուն ոգին պանդուխտ է մնացած իհայրենեաց, յայն հայրենեաց՝ որ այլ գրեթէ հայրենիք չէ :

Հայրենիքն է իւր բոլոր մտածութիւնը, եւ բոլոր փափաքը այն է՝ որ դարձեալ գնա մեծ եւ երջանիկ տեսնէ : Այս ազնուական մտածութեանց մեջ միշտ բան մը կայ որ բարձր կերպով յախրութիւն մը կպարունակէ, ուստի եւ ինքնաբոլիս իսկ ծնանի գիգօր Բանաստեղծութիւն :

Բայց դուք որ միւս ձեր ունեցած առաքինութեանցը պսակ կղնէք գիամեստութիւն, ձեր այս կարողութիւնը միշտ ինծմէ ծածուկ պահեցիք : Անանկ որ՝ ինձ համար անկարծելի եւ նոր Քերթող մը դուք ելաք . եւ ես գորովանօք սրտի ուրախակից եղէ Հայաստանի՝ որ այնպիսի Որդի մը ունի՝ որ զինքը այսպէս ազնուականաբար զգալ կուտայ :

Հնապա, մեծանունդ իմ Բարեկամ, յառաջտարեք ձեր գեղեցիկ գործը : Մխիբարեցեք ձեր Մայրը . լացեք եւ լացուցեք իրեն համար : Արտասուք միշտ բարիս ծնանին :

« *Օրհնեալ որ սիրեն ըզիեզն Հայաստան :* »

Օրհնեալ եւ դուք՝ որ գնա սիրել կուտաք, օրհնեալ քիջ մը

coltissimo ingegno, non sentiste il bisogno di vestire di poesia gli intimi vostri pensieri. Tanto più che mesto sovente dovea essere l'ordine delle vostre idee, come quelle che aveano stanza in un' anima sensibilissima lontana dalla sua patria, che non è quasi più patria; e ad essa perpetuamente vi pensa, e la vorrebbe rivedere grande e felice. E in questa nobile regione del pensiero c'è sempre qualche cosa di altamente malinconico, e però vi nasce spontanea la gagliarda Poesia.

Ma voi che l'altre virtù coronate di modestia, mi avete sempre tenuta celata questa facoltà. Cosicché mi uscite inaspettato e nuovo Poeta; ed io mi consolai fino alla commozione coll' Armenia, d'averne un figliuolo che la faccia nobilmente sentire.

Seguite, mio illustre amico, seguite la bella opera vostra; date

եւ ես՝ որ սիրեմ զնա, վասնզի սիրեմ զամենայն բշուառները : Ասոնքբարձր, ճշմարիտ եւ զօրաւոր բանաստեղծութիւններ են : Շնորհակալ եմ որ ինձ առաքեցիք. շնորհակալ եմ նաեւ այն անուշ ու բուռն զգացմանց համար զոր ինձ զգալ տուիք : Ամեն անգամ որ բան մը իլոյս բնծայեք՝ կաղաչեմ որ ինձ ալ մասն հանեք : Վասնզի ես կպատուեմ զձեզ եւ կսիրեմ, ինչպէս որ եքն արժանի, եւ կզգամ ձեր բարեկամութեան ամենամեծ յարգը : Ձեր երբայէն վերջը՝ Ս. Ղազարոս պգտի կղզին ինձ անբնակ անապատ մը կերեալ.....

ԱԼԷԱՐՏՕ ԱԼԷԱՐՏԻ.

Վերոնա, 17 յունիս 1858 (*).

Գերապատիւ Բարեկամ.

Նոր եւ անբնական շնորհակալութիւններ ձեր քերթուածոց ցան-

consolazione alla Madre : piangete e fate piangere per essa. Le lagrime fruttano sempre bene.

« *Bénis soient ceux qui aiment la pauvre Arménie!* »

E benedetto siate voi che la fate amare, e un poco benedetto io pure che l'amo, perchè amo tutti gli sventurati.

Codeste sono alte e vere e potenti Poesie. Vi ringrazio di avermele inviate; e vi ringrazio delle dolci e forti commozioni che mi avete fatto sentire. Ogni volta che esce qualche cosa di vostro, vi prego a volermene far parte. Giacchè io vi onoro e vi amo, come meritate, e sento l'esimio pregio della amicizia vostra : e partito voi, l'isoletta di S. Lazzaro mi pare deserto inhabitato!.....

ALEARDO ALEARDI.

(*)

Verona, 17 giugno 1858.

Egregio Amico,

Grazie nuove e infinite per il caro presente delle vostre Poesie.

կալի ընծային համար : Փափուկ՝ ողբանուագ եւ գորաւոր
ձայն մըն է դա, որ գեղեցիկ եւ բշուառ. Հայաստանէն կելլէ,
ու Փարիզէն մինչեւ հոս արձագանգ կուտայ ընդ պայծառ
այերս իմոյս Վերոնայի, որ եւ ինքն գեղեցիկ է եւ բշուառ :

Ձեր համեստութիւնը, ո՞վ սիրելի, ինձ գուարճալի խաղ մը
ըրաւ : Ես գձեզ իՎենետիկ ծանեայ իբրեւ այր զիտուն, ամենա-
հմուտ իհնագիտական մակացութիւնս եւ իՄատենագրութեան.
ծանեայ՝ թէ որպիսի ծաղիկ մի էք ազնուամտութեան, միան-
գամայն եւ ձեր ոգւոյն ինչպիսի ազնուական զգացմունքներ
ունենալը հասկըցայ : Ես ասիկա արդէն շնտ էր : Ես ահա
կելլէք Փարիզ կերբաք, ու մէյմ'ալ յանկարծ Բանաստեղծ մը
կըլլաք, եւ *Ազգային քանաստեղծ*, եւ բուռն եւ գորաւոր : Ես
իբր թէ այսչափս բաւական չըլլար՝ նաեւ Երաժիշտ :

Բայց ինչ. կուգէք դուք բոլոր Մուսայից սերն իձեզ զբաւել...
Երանի ձեզ որ զիտցեր էք այն ինն Քերց (Մուսայից) զգաց-
մունքը այնպիսի կերպով մը բարեխառնել որ մեկը միւսոյն դէմ
ինախանձ չըզգուի, եւ ոչ ալ մեկը միւսոյն զգացմունքը ցրուէ...

Գեղեցիկ ինչ է *Հուսիստաղբ*. բայց գեղեցկագոյն է ինձ համար
Անձուկի հայրենեաց երգը : Մխիթարեցէք այսպէս ձեր Մայրը,

La è come una voce delicata, lamentosa e forte uscita dalla bella e
infelice Armenia, che ripercossa a Parigi, eccheggia fino a qui
per queste arie vivide della mia pur bella anch' essa e infelice
Verona.

La vostra modestia, o caro, mi à fatta una curiosa ghermi-
nella. Io vi conobbi a Venezia per uomo dotto, nelle scienze
fisiche e nella Letteratura espertissimo; vi conobbi per quel
fiore di gentilezza che siete, e per quell' anima che avete im-
pressa dei piu nobili sentimenti. E questo già era molto.
Quant'ecco mutato che vi siete a Parigi, mi uscite Poeta, e
Poeta nazionale, e gagliardo e forte; e per sopramercato mi
uscite anche scrittore di musica.

Ma e che? Volete voi accappare l'amore di tutte le Muse?...

զՀայաստան : Վշտաջարջար Մօր մը համար որդւոյ մը ցուցուցած այն հոգը՝ վսեմ բան է : Աստուած օրհնեալ ձեզ համար մեծ, բարերար ու փառաւոր վախճան մի է սահմանած :
Երանի՛ ձեզ որ կրցաք մագերէն բռնել զՊատեհութիւն... :

Իմ բաներուս գալով, խեղճ բաներ, ջեմ գիտեր ձեզի ինչ դրկեմ : Ձեմ լիշեր քե արդեօք ունեցնաք իմ երկար մեկ երգս՝ որ կըսուի *Առաջին Պատմութիւնի*, եւ ոչ իսկ վերջի գրածս՝ որ է, *Ինչպատեհեկութեան մեկ ժամը* : Չասիկա անակողրկեմ. եւ կողրկեմ յօժարութեամբ, վասնզի սրտի գեղում մի է. եւ այս մասին մեզ երկուքնիս զիրար լաւ կհասկընամք. իսկ իբրեւ արուեստի գործ՝ դուք դատեցէք զայն ով ճարտւոր Արուեստագէտ :

.....

ԱԼԷԱՐՏՕ ԱԼԷԱՐՏԻ.

Յ. Գ. Այս ստղերս զրելուս ատեն՝ բարեկամիս մեկը ձեր ջքնաղ երգը կնուագէր. ինչո՞ւ ջեմ կրնար բացատրել ձեզ սըրտիս զգացածը.....

Beato voi che avete saputo temperare i sentimenti di quelle nove Sorelle a modo, che l'una non pigli gelosia dell' altra, nè ve ne distraffa gli affetti!.....

Bella cosa è il canto *alla Luna*. Ma più bello ancora per me il *Desiderio della Patria*. Seguite a consolare la Madre, l'Armenia! Magnanima è questa cura del figliuolo verso la Madre che patisce. Dio benedetto vi ha assegnato un compito grande, benefico e glorioso.

Fortunato Voi che avete saputo afferrare per le chiome l'Opportunità!....

Quantò alle cose mie, povere cose! non vi saprei che mandare. Non ricordo se abbiate avuto un mio lunghissimo canto intitolato : *Le Prime storie*; nè se conosciate un' altro, l'ultimo che scrissi : *Un' ora della mia giovinezza*. Questo frattanto vi

Բայց արդեօք օտարագգեաց այսպիսի եռանդեամբ վառուած ատեն՝ միքե ազգային բանասերք անզգայ մնացին իրենց ազգային Քերթողին տաղերն ու երգերը լսելու ատեն..... Ո՞չ ապաքեն Փարիզէն, Լոնտրայէն սկսեալ մինչէն ԻՊօլիս, ԻՄոյտաւիա, Ռուսաստան, Վրաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Ովկիանիա,մինչ քանիս ամեն տեղ ուր որ Հայու սիրտ մը կայ՝ քնդաց ու գորովեցաւ Խորխոռունւոյն ազգաշունչ նուագներովը... սիրեց իւր ծաղկահասակ Քերթողը ու լի սրտիս օրհնեց անոր քնարն ու պանծացաւ տեսանելով իւր Հայրենեաց մեկ փառքը... :

Աւերորդ կհամարիմք հոս այն բազմաբիւ նամակները մեշ բերել, զոր օր ըստ օրէ մէք էս կամ նոյն ինքն Քերթողը կընդունի իսիրելի ազգայնոց, որոց ինքն էս մէք հրապարակաւ մէք շնորհակալութիւնը

manderò. Ve lo mando volentieri, perchè gli è uno sfogo del cuore; e noi due, su quel terreno c'intendiamo. Come lavoro d'arte, lo giudicherete, voi, sagace Artista!

.....

A. ALEARDI.

P.-S. Finchè scrivevo queste righe un' amico mi suonava il motivo della vostra bellissima canzone. Peretè non vi possa dire quello che provavo?...

կյայանեմք . եւ յորոց ոմանք այս տարւոյս *Մասեաց Աղաւնոյն* մեջ հրատարակուեցան : Ինչպէս նաեւ Տ. Թալես-Պեռնար գաղղիացի անուանի քերթողին նամակն ու գաղղիարեն լեզուաւ ըրած նմանողութիւնը *Օրհնեանք որ սիրեն զհեզն Հայաստան* երգոյն :

Նոյնպիսի նմանութիւններ եւ այլոց քերթուածոց Խորենայ վարդապետի ստեպ կընդունիմք եւ յայլոց գաղղիացի եւ իտալացի քերթողաց :

Բայց անելորդ ջէմք համարիր հոս որ օտարագրեաց վրայ մեր Քերթողին ըրած տպաւորութեանցը եւ զայս անելցընեմք յիշէյ յուրախութիւն բարեսէր ազգասիրաց՝ որ գաղղիացի ազնուական բանասիրի մ'ալ ականջն հասնելով Հայ Քերթողին երգոց ճայնը՝ կգարմանայ որ հին պատմութեան մեջ Հայ անուամբ յիշեալ ազգը դեռ կենդանի է եղեր . . . ու այն Հայաստանը՝ զոր իր պանդուխտ որդւոց մէկը Սենայ խոխոջածայն այեացը քով կերգէր ու կողբար՝ այնպէս սիրելի ու ցանկալի կըլլայ այն ազնուական ու ազնուասիրտ Գաղղիացւոյն՝ որ մեր Քերթողին տեսութեան գալով, ու Փարիզի մէկ անկիւնը փոքրիկ Հայաստան մը (Հայկագեան վարժարանը) ուրախութեամբ տեսնէլէն յետոյ՝ իւր բարեկամացը մնար բարով մը կըսէ, ու ճանապարհ կելլէ երբայտու եւ *զիւնն Հայաստան* տեսանելու, խոստանալով Հայկագն Քեր-

քողին որ անոր հրատուջոր կարօտանաց ողջոյնը եր-
բայ Մասիսի սուրբ սարերուն ու հայրենեաց կեն-
սատուր օղոյն ու կենսախառն հողոյն մատուցանե...



Իսկ մէք երեքին Վարդապետքս՝ որ Խորեն վար-
դապետին գայուստը, մանաւանդ այսպիսի ժամանակ՝
մեծ նշան կհամարիմք այցելութեան Աստուծոյ իվերայ
Ազգիս, եւ արդարեւ « Աստուածային եւ երկնաւոր
շնորհ՝ որ միշտ լնու զպետս կարեաց առաքելական
եկեղեցւոյ » (*Մաշ.*) աւելի կքաջալերուիմք եւ կարիա-
նամք այնու՝ քան թէ բարեսէր Ազգայնոց բիրաւոր
գովասանքներեն՝ որ տուեր են ու կուտան մեր ուղիղ
դիտաւորութեան եւ որպիսի եւ իցե աշխատութեանցը:

Կտեսնեմք ասով սպ յայտնապէս որ Աստուած մեզի
հետ է, այն՝ որ իւր անսուտ բերնով կըսէր թէ « Ուր
իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ
ես իմեջ նոցա » : (*Մատթ. ԺԹ. 20*).

Թող յիշեն գայդ բշնամիր մեր և Ազգին, և քե որ
իրենց մինչեւ ցայժմ ընդունայն էլած ջանքերն
ջխրատուեցան ու չկրցան ըմբռնել՝ գէթ Աստուածային
այս խոստմունքը մտքերնին բերեն ու սյ դադրին
խնոտի ջարեաց, և « Իբամբասանաց խնայեցեն
գլեգու » (Իմ. Սող. Բ).

« Տէր է մեր օգնական, զի արասցէ մեզ մարդ
կզոջեմք միշտ Մարգարէին հետ : Ո՛չ, ո՛չ, վախ չու-
նիմք մեր բշնամիրներէն՝ որչափ որ այ գորաւոր կամ
խորագետ և ծածկագործ ըլլան.... :

Այն, « Ընդ ուղիս անցին անձինք մեր. անցին անձինք
մեր ընդ ուղիս անդադարս : Օրհնենայ է Տէր՝ որ ոչ
ետգմեզ յորս ատամանց նոցա : Անձինք մեր ապրեցան
որպէս ճնճողուկ յորոգայթէ որսողաց : Որոգայթք
նոցա փշրեցան, և մեր ապրեցաք : Չգնուրիւն է մեզ
յանուանէ Տէառն » : (Սող. ՅԻԳ.)

Եւ որչափ մեր հայածիչներեն ու թշնամիներեն վախ չունիմք՝ քաջալերեալք յաստուածախրախոյս բանիցն Քրիստոսի քե « Մի այտուհետեւ երկնջիցիք ինոցանէ. » (*Մտք. Ժ. 26.*) նոյնչափ այ անոնց թշնամական ոգւոյն վրայ կցաւակցիմք ու կխղճամք, « Որ գործեն զանօրէնութիւն » (*Մտք. ԺԳ. 41*) Եւ « Ոչ գիտեն զինչ գործեն » (*Ղուկ. ԻԳ. 34*) : Կներեմք իրենց, Եւ մեր երկնաւոր Վարդապետին պատուիրանին համեմատ՝ (*Մտք. Ե. 44 : Ղկ. Զ. 27, 35*) նաեւ կսիրեմք մեր Թշնամիները. բայց Եւ ոչ այնչափ միայն, հապա նաեւ Քրիստոսի օրինակին հետեւելով որ « Արհամարհեաց զամօք » (*Եբր. ԺԲ. 2*) երբ կլսեմք քե այն թշնամութիւն գործողներեն մեկը, (չըսեմք քե Եւ պարագլուխը...) մահացու հիւանդութեամբ կտագնապի, կփութամք խոնարհութեամբ (15 օգոստոս 1858) երբայ իրեն ոտքը ու հաշտութիւնը դիւրացնելով քե քեւցընել իրմէ այն ծանրավիշտ հիւանդութենէն աւելի իւր խղճին ներքին ամենածանր տագնապները.....

Բայց անեցընեմք նաև,՝ քե տան դրանք դիմաց երկար ժամանակ սպասելնես ետես նաև ճամբայ կրդրուիմք դունապանի մը ճեռքով, եւ ճջ իսկ արժանի լեալ որ իրենց խմբէն գէթ կրտսերագոյն մեկը իջնայ ու *խաղափախակալսն* — ջըսեմք Քրիստոնեական — խօսք մը գրուցէ այն երկու այցելու Վարդապետացն՝ որ քե եւ դուզնաբեայք ոմանք՝ բայց այսօրուան օրս ջորս միլիոն ազգի մը երեսփոխանք են ճանջցուած Գաղղիոյ կայսերանիստ մայրաքաղաքին մեջ, եւ Հիմնադիրք եւ Վերատեսուչք ԱԶԳԱՅԻՆ Վարժարանին (*):...

(*) Այս տխուր ու լուելու արժանի դիպուածը անոր համար հոս գէթ հարեանցի մը յիշեցինք՝ որպեսզի մեր խօսքերէն անելի մեր զործոյն վկայութենէն ճանջցուի որ մեք մեր ամենայն նեղջաց եւ հալածջաց եւ թշնամեաց ներեր եմք եւ կենքեմք իսրտէ եւ անոնց համար նաև կաղօթեմք : ճշմարտութեան սերն է միայն որ գմեզ երբեմն կրունաղատէ առանց կրից ջատագով կալ մեր սուրբ եկեղեցւոյն իրաւանցը, կամ մեր շնո իսկ գրպարտեալ եւ բամբաստեալ անուանը :

Ո՛հ, արդարեւ « Ո՛չ գիտեն զինչ գործեն ».....

Բայց քե որ Աստուծոյ անքնին խորհուրդն ու տրուտեսութիւնը ուզենայ այ բողոսի որ Չարութիւնն առժամանակեայ յաջողութիւն մը ունենայ, բողոս կըսեմք որ « Մարդք չարք յառաջ եկեացեն իջար անդր » ինչպէս Առաքեալը կըսէ (*Բ. Տիմ. Գ. 15*). քե որ կարենան այ վերջապէս փակել տայ զՎարժարանս, բայց ո՛չ, չեն կրնար փակել այն ամենայն ճանապարհները՝ որ Աստուած բացեր է առջեւնիս, մեր սիրելի Ազգին հոգեւոր է ուսումնական յառաջադիմութեանն ու բարգաւաճանացն համար :

Կրնան գուցէ անուննիս արել անխիղճ զբրպարտութիւններով, « Բամբասել իբրեւ զջարագործս » (*Ա. Պետ. Բ. 12*) բայց չեն կրնար ջնջել այն արիւնախառն արտասուաց կաթիլները զոր քափել տուեր էն մեզ իվկայութիւն արդա-

րութեան և իփստոս աստուածային ճշմարտութեան, և որ այնպէս բարձրաձայն կբողոքեն յերկինս :

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԹԷՌԴՈՐԵԱՆ.

ԳԱՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ.





«Ազգային գրադարան»



NL0243658

